252

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

142

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՆ

ՈՒ

ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ԾՐԱԳԻՐԸ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒՅ ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
1908

Ջ81·6
Վ-47

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

ՆՈՒԷՐ

ՑԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ.

Ցառաջաբանի փոխարէն այստեղ առաջ ենք բերում այն՝ ինչ որ խօսել ենք Թիֆլիսում 1907 թ. Հոկտեմբերի 6-ին Ս. Էջմիածնի կալուածների բարեկարգութեան համար գումարուած ժողովի բացման ժամանակ։

«Ժողովը բացուած համարելով նախ իմ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում յարգելի ժողովականներից՝ որ յանձն էք առել գումարուել այստեղ՝ խորհրդակցելու թէ ինչ միջոցներով հնարաւոր է կանոնաւորել Ս. Էջմիածնի կալուածների շահագործման խնդիրը։ Թէ Էջմիածնում եւ թէ ժողովրդի զանազան շրջաններում այս խնդիրը վաղուց է ծագել, բայց դժբախտաբար մինչեւ այժմ իւր ցանկալի լուծումն չէ ստացել եւ տակաւին մնում է առկախ։ Ս. Էջմիածինը սկզբից մինչեւ այժմ եղել է մի կենդրոն, որ յարգուել եւ գործել է ոչ թէ իւր ներսն ապրող անհատների համար, այլ այն ժողովրդի, որի հետ ապրել է եւ որի ուրախութեան ու տխրութեան միշտ մասնակից է եղել։ Մի կողմը թողնենք, թէ որչափով է օգտակար եղել, որքան թերի է կատարել իւր պարտականութիւնները ղէպի հայ ժողովուրդը՝ այդ խնդրի լուծումը մեզ հեռուն կը տանէր, բայց փաստն այն է՝ որ Էջմիածինն իւր պատմական դերը կատարել է ղէպի հայ ժողովուրդն եւ դեռ եւս ունի կատարելու կարեւոր

ղեր, քանի որ արտաքին զանազան աննպաստ հանգամանքներ գոյութիւն ունեն մեր ժողովրդի ինքնուրոյն կեանքի զարգացման նկատմամբ։

Ներկայումս որքան որ առաջ գնայ մեր ժողովրդի ինքնուրոյն գործունէութիւնը, որքան որ ապակենտրոնացումն լինի մեր թեմերում՝ դպրոցների եւ կալուածական խնդիրների նկատմամբ, այնուամենայնիւ հարկաւոր է մի վարչութիւն, մի կենտրոն, որն իւր ձեռքն առնի մեր բոլոր դպրոցական եւ կալուածական խնդիրները, կարգ ու կանոնի տակ ձգի, հրահանգներ տայ, ընդհանուր հոգացողութիւն անի, որպէսզի թէ մեր դպրոցների կառավարութիւնն եւ թէ կալուածների շահագործման խնդիրը կանոնաւոր ճանապարհով ընթանայ, որպէսզի միատեսակութիւն պահպանուի բոլոր վարչութիւնների գործառնութեանց մէջ, եւ ոչ թէ անցեալ տարուայ պէս իւրաքանչիւր դպրոց, իւրաքանչիւր վարչութիւն իւր ցանկացած կանոններով առաջնորդուի եւ պատճառ դառնայ խռովութիւնների՝ խանգարելով դպրոցի խաղաղ կեանքը, իսկ մեր կալուածներն էլ ապիկար կառավարիչների ձեռքով ոչնչանան եւ կորստեան մատնուեն տասնեակ հազարներ։ Իսկ այդ կենտրոնական վարչութիւնը պէտք է լինի Էջմիածինը, որովհետեւ գոնէ առ այժմ՝ այլ կերպ էլ չէ կարող լինել, քանի որ մեր բոլոր դպրոցների եւ վանական կալուածների կառավարութեան նկատմամբ պետութիւնը de jure ճանաչում է իբրեւ սեպհականատէր եւ իրաւատէր միայն Էջմիածինը։

Ուրեմն եթէ այդպէս է՝ քարոյական պարտականութիւն կայ հայ ժողովրդի ձեռնհաս եւ բանիմաց մասի վրայ, որ աջակից լինի այդ հաստատութեան — Էջմիածնին, որպէսզի վերջինս անթերի կերպով կա-

ողանայ իր վրայ դրուած ծանր պարտականութիւնները կատարել յօգուտ դժբախտ հայ ժողովրդի։ Ինչպէս Ձեզ յայտնի է, Էջմիածնում եղած ոյժերն անբաւարար են կանոնաւոր կերպով առաջ տանելու դպրոցական եւ կալուածական լուրջ ու կարեւոր գործերը, խիստ անհրաժեշտ է այդ հաստատութիւնը զօրեղացնել վերոյիշեալ խնդիրների մէջ հմտութիւն եւ փորձառութիւն ունեցող կարեւոր գործիչների միջոցով, որոնք ձեռք ձեռքի տուած հոգեւոր իշխանութեան հետ կարող կըլինին մեր կեանքի եւ հաստատութիւնների համարեա անկեալ վիճակը բարելաւել եւ ցանկալի չափով իրենց բարձրութեան վրայ դնել։

Խօսքս այժմ Էջմիածնի կալուածների բարեկարգութեան մասին լինելով դառնանք այս կարեւոր խնդրի շուրջը։

Դարերի ընթացքում Էջմիածինը ձեռք է բերել այժմուայ իւր ունեցած կալուածները թէ իւր սեպհական միջոցներով եւ թէ մեծ մասամբ նուիրաբերութեամբ։ Հասկանալի է, որ կալուածք նուիրաբերողի նպատակը չէ եղել, որ իւր նուիրած կալուածքի արդիւնքով պահպանուի Էջմիածնի միաբանութիւնը, այլ որպէսզի մեր Հոգեւոր վարչական կենդրոնի միջոցով պահպանուի դպրոցներ, եւ զանազան աստուածահաճոյ հաստատութիւններ, ուրիշ խօսքով ազգային հոգւով լցուած հայն իւր նուիրաբերութեամբ կամեցել է այդ Կենդրոնի—Էջմիածնի միջոցով զարկ տալ հայի կուլտուրական կեանքին։ Դժբախտաբար պէտք է ասել որ Էջմիածինն այդ նկատմամբ բաւարար չափով չէ կատարել իւր դերն ու արդարացրել այդ կալուածները նուիրաբերողների յոյսերը, հազիւ պահպանել է մի ճեմարան, որը միայն 33 տարուայ կեանք ունի,

եւ որի ծախսերի աշքի ընկնող մասը հոգացումէ Ս. Ս. Գէորգ Դ-րդ երջանկայիշատակ Կաթուղիկոսի հոգացողութեամբ յատկապէս ճեմարանի պահպանութեան համար թողած արժէքաւոր թղթերի տոկոսներով։ Մինչդեռ աւելի պիտի անէր Էջմիածինն եւ բաց անէր զանազան վայրերում միջնակարգ դպրոցներ, հիւանդանոցներ, ապաստարաններ, որբանոցներ, աղքատանոցներ եւ այլ հաստատութիւններ։ Այդ բոլոր ցանկալի ձեռնարկութիւնները չէ եղել Էջմիածնի կողմից, որովհետեւ ձեռնհաս չէ եղել օգտակար ճանապարհով շահագործել մեր ունեցած կալուածներն ու նրանց արդիւնքով իրագործել այդ ամենը։

Սակայն որչափ որ Էջմիածինն է թերացել կատարել իւր պարտականութիւնները, այնչափ էլ թերացել են ժողովրդի ձեռնհաս մարդիկ, որոնք հեռու մնալով այդ հաստատութիւնից, շատ քիչ են հետաքրքրուել նրա ներքին գործերով՝ աշակից չեն եղել՝ որ հնարաւոր լինի իրենց խորհուրդներով եւ անձնական միջամտութեամբ բարւոքել մեր կալուածների շահագործման ընդհրը, որպէսզի ցանկալի արդիւնքը ստանալով կրկնապատկեն եւ եռապատկեն մեր դրպրոցների թիւը, հիմնեն վերոյիշեալ կարեւոր հաստատութիւնները։

Ժողովրդի մասնակցութիւնը Էջմիածնի գործերում համարեա թէ չէ երեւում, հեռու է մնացել ժողովուրդը Էջմիածնից եւ միայն անհատները բաւականացել են հեռուից երբեմն երբեմն քննադատել։ Ժողովուրդի մասնակցութիւնն Էջմիածնի գործերում կարծես միայն երեւում է **Կաթուղիկոսի ընտրութեան** եւ **թաղման ժամանակ**։ Երբ կաթուղիկոս պէտք է ընտրել՝ ժողովրդից ընտրուած պատգամաւորներն ամեն

կողմերից հաւաքւում են Էջմիածին, ընտրում են Կաթուղիկոս ու հեռանում, մէկ էլ ապառում թէ ինչ պէտք է Կաթուղիկոսը վարձանուի, որ հաւաքուեն եւ թաղեն։ Բայց երբէք հայ ժողովուրդը իւր ներկայացուցիչ պատգամաւորների միջոցով չէ ուզում հետաքրքրուել ու իմանալ, գոնէ առնուազն իւրաքանչիւր 3 տարուց յետոյ, թէ արդեօք իրենց ընտրած կաթուղիկոսն իւր հոգեւոր վարիչների հետ միասին ի՞նչ է անում ա Էջմիածնում; քանդո՞ւմէ եղածը, պահո՞ւմ է միայն ստացածը, թէ աւելի ծաղկեցնումէ, կամ թէ արդեօք ի՞նչպէս է անօրինւում Կաթուղիկոսի խնամքին թողնուած դպրոցական կամ կարուածական խնդիրները, թէ արդեօք Էջմիածին մնած դրամները կանոնաւոր կերպով գործադրւում են բուն իրենց նպատակին, թէ մէջ տեղ հարստանում են մանաւոր անհատների գրպանները, թէ արդեօք դրսի կամ ներսի հոգեւոր վարիչներից ո՞րը բարեխղճաբար եւ մաքուր կերպով է կատարում իւր պարտականութիւնները իրեն հաւատացած պաշտօնի մէջ եւ այլն եւ այլն։ Չէ՞ որ Կաթուղիկոսից սկսած մինչեւ եկեղեցու յետին ծառայողը համարւում է ոպատաւոր եկեղեցու—այսինքն ժողովրդի։ Բոլորս էլ կոչուած ենք ժողովրդին ծառայելու, ժողովրդի բարիքների համար գործելու, ուրեմն ինչո՞ւ նոյն ժողովրդից կարգուած չլինեն որոշ մարդիկ, որոնք իրենց ունեցած իրաւունքի համաձայն հաշիւ տեսնէին իրենց կենտրոն Էջմիածնի հետ։ Եթէ այդպէս լինէր՝ Խրիմեան Կաթուղիկոսի օրօք ստացուած տասնեակ եւ աւելի հազարների արդիւնքը Էջմիածնում կ՚երեւար այժմ։ Ահա այն ժամանակ հասկանալի կըլինէր, որ մեր եկեղեցին ժողովրդական եկեղեցի է, որ յիրաւի, Էջմիա-

ծինն եւ ժողովուրդը ձեռք ձեռքի տուած առաջ են տանում իրենց գործերը։ Բայց դժբախտաբար այդպէս չէ եղել, հոգեւոր իշխանութիւնը գործել է անկախ, իսկ ժողովուրդն էլ մնացել է անտարբեր, խօսքս հարկաւ անհատների մասին չէ։

Ասում եմ՝ որ հոգեւոր իշխանութիւնն անկախ է գործել, որովհետեւ հնարաւորութիւն ունենալով իւր անհրաժեշտ ծախքերը հոգալ նոցած եկամուտներով լուել է ու աւելին չէ արել՝ իսկ այդ եկամուտները եղել են ոչ թէ հարիւրաւոր դեսեատին տարածութիւն ունեցող կալուածներից, այլ մեծ մասամբ նուիրատուութիւններից, արժէքաւոր տոմսերից ստացուած տոկոսներից, վիճակային արդիւնքների մասնաբաժիններից, ուխտատեղիներից, պտղի եւ հոգեբաժին արդիւնքներից (տեսնել արդիւնքների տեսակաւորութիւնն ու քանակը գրքիս մէջ զետեղուած չորս տարուայ հաշիւներից), բայց այժմ այս արդիւնքների մեծագոյն մասը ոչ միայն նուազել, այլ եւ կտրուել է դրսից, հետեւապէս զգալի պիտի լինէր Էջմիածնի համար այս ամենը եւ անշուշտ պէտք է լուրջ կերպով ուշադրութիւն դարձնէր իւր արժէքաւոր կալուածների վրայ, որպէսզի նրանց շահագործման խնդիրը կանոնաւորելով, կարողանայ հոգալ իւր անհրաժեշտ ծախքերը, չնայած որ վերջերս աւելի կրճատել է այդ ծախքերը։ Ահա այդ պատճառով ս. Սինոդը Վեհափառ Կաթուղիկոսի բարեհաճ համաձայնութեամբ նշանակել է սոյն ժողովը, որ Ձեր միջոցով, իբրեւ մասնագէտ եւ ձեռնհաս անձնաւորութիւնների, հնարաւոր լինի լուծել մեր բազմաթիւ կալուածների կանոնաւոր եւ արդիւնաւէտ շահագործման խնդիրը։ Մայր Աթոռը լիակատար յոյսերով դիմում է Ձեզ, իբրեւ ժողովրդի ձեռնհաս եւ

զիտակից անդամների, որ Ձեր օգտակար խորհուրդներով ու զործառնութեամբ իրագործուի մեր արժէքաւոր կալուածների շահագործման խնդիրը, որպէսզի հնարաւոր լինի ոչ միայն հոգալ Էջմիածնի անհրաժեշտ ծախքերը կամ ապահովել Ճեմարանի նիւթական դրութիւնը, այլ եւ մեր բոլոր թեմական դպրոցները, որոնց նիւթական վիճակը նոյնպէս աննախանձելի է։

Այժմ պարտք համարելով համառօտակի զեկուցանել Ձեզ—յարգելի ժողովականներիդ—մեր կալուածներից ստացած եկամուտների մասին, առաջնորդութիւն եմ խնդրում, որ ինքս չեմ կարող մանրամասն եւ լիակատար տեղեկութիւններ հաղորդել Ձեզ, որովհետեւ կալուածական բոլոր զործերը, մուտքի եւ ելքի հաշիւները, ապառիկները պահւում են ս. Էջմիածնի Սինոդում, Կոնսիստորիաներում, որտեղ դժբախտաբար պահումն միանգամայն անկանոն, առանց կանոնաւոր մատեանների ու հաշիւների, որոնց պատճառներն այստեղ քննելով մեզ մեր էական նպատակից հեռու կըտանէր։»

Մեր կալուածների շահագործութեան առթիւ պարզած լինելով մեր միտքը, բերելով Թիֆլիսի Ժողովում մեր խօսածը, հարկ ենք համարում այդ բոլորից յետոյ աւելացնել՝ որ մենք յանձն առանք մեր սուղ միջոցներով հրատարակել զրքոյկս,*) որ միջոց տանք

---

*) Այս հրատարակութեան ծախքը պարտաւոր էր Էջմիածինն ինքն անէր և մենք կըզկատեզէինք այդ դէպքում նաև մեր կալուածների մասին մասնագէտների ձեռքով կազմած գնահատելի Տեղեկագիրներ, բայց ծախքի պատճառով չկարողացանք այդ անել, թողնելով այլ անգամ բոլոր նիւթերը մասին հրատարակել։

ապն Հոկտեմբեր ամսի 30-ին Կաթուղիկոսական ընտրութեան առթիւ ս. Էջմիածին գումարուած ժողովրդի հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներին եւ առհասարակ այդ խնդրով հետաքրքրուող անձանց ծանօթանալ Մ. Աթոռի կալուածներին եւ նրանց բարեկարգութեան առթիւ կազմուած երկու (Տնտեսագիտական եւ Իրաւական—Վարչական) կարեւոր ծրագիրներին ու նրանց շուրջը արծարծուած սկզբունքային խնդիրներին, այս ունենալով որ յարգելի պատգամաւորները բացի միայն Կաթուղիկոս ընտրելուց՝ մի քանի ժամ կ'նուիրեն կալուածների բարեկարգութեան խնդրին եւ կընպաստեն ս. Էջմիածնի եւ առհասարակ մեր բոլոր վանական եւ եկեղեցական կալուածների բարեկարգ շահագործութեան համար Թիֆլիսի Տնտեսագիտական եւ Իրաւական Վարչական Սեկցիաների կազմած երկու կարեւոր ծրագիրն իրագործելու։*)

Որպէսզի ընթերցողներին միջոց տանք մանրամասն ծանօթանալու Մ. Աթոռի ապագայի անասութեան՝ կցում ենք զրքոյկիս վերջում գիւղատնտես պ. Կ. Մելիք Շահնազարեանցի կազմած տեղեկագիրը։

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԼԱԽԵԼԵԱՆ

14-ն Հոկտեմբերի 1908 թ.

ս. Էջմիածին։

---

*) «Մշակ» թերթի 1908 թուի, 8, 12, 13, 14, 16 և 17 համարներում հրատարակեցինք միայն երկու Սեկցիաների կազմած ծրագիրը։

Ս. ՍԻՆՕԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ։

Հրաման ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի անդամոյ Սինոդիս Տ. Բաբգէն վարդապետի.

Ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի Սինոդիս լուան զեկուցումն յաղագս չահագործելոյ զկալուածս Մ. Աթոռոյս և վանօրէից։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ՝ պատուիրել ամենայն Առաջնորդաց Թեմից Հայոց, նախ՝ առաքել ի 5 յառաջիկայ հոկտեմբերի զմին յանդամոց հոգաբարձութեան Թեմական դպրանոցի ի քաղաքն Տփխիս վասն խորհրդակցութեան զկանոնաւորութենէ կալուածոց, և քանզի ի Թեմին Շամախւոյ չիք Թեմական դպրանոց, ուստի հարկ է առաքել զմին յանդամոց հոգաբարձութեան ծխական դպրոցաց Հայոց Բագու քաղաքի։ Երկրորդ՝ հրաւիրել ի յիշեալ խորհրդակցութիւնն զկառավարիչս կալուածոց այնց Թեմից, յորս գոն կառավարիչք, հրահանգելով նոցա բերել ընդ ինքեանս զկազմեալ մանրամասն վաստակի տեղեկութիւնս, թէ զարդի վիճակաց և թէ զեղանակէ ապագայ չահագործման կալուածոց։ Երրորդ՝ առաջադրել յիշեալ կառավարչաց այժմէն իսկ կազմել և բերել ի կազմելի ժողովն ի տես և ի խորհրդակցութիւն նորին զմօտաւոր տակացիա—զքանակէ. զորակէ ծառոց անտառաց, նոյնպէս և զտեսակէ հանքաց։ Չորրորդ՝ ի ձեռն Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի առաջադրել կառավարչի կալուածոց Մարցայ կազմել նաև զմօտաւոր տակացիա—զքանակէ և զորակէ կալուածոյն Հաղարծնի վանուց և մատուցանել ժողովոյն։ Հինգերորդ՝ ի ձեռն Կոնսիստորիային Երևանայ յանձն առնել կառավարչի կալուածոց Ծատուրեանի,

որ յԱրզաքանդ գեղջ, առանձինն վարձատրութեամբ կազմել զմօտաւոր տակացիա—զքանակէ և զորակէ անտառին Բջնի գեղջ Մ. Աթոռոյ և առաջի առնել ժողովոյն։ Վեցերորդ՝ կարգել ներկայացուցիչ ի կողմանէ Մ. Աթոռոյ զանդամ Սինոդիս զՏ. Բարգէն վարդապետն Աղաւելեան, զի նախագահելով ժողովոյ՝ հրաւիրեսցէ ի ժողովն բաց ի վերոյիշեալ ներկայացուցչաց նաև զյետագայ մասնագէտ անձինս զպարոնայս՝ Պօղոս Ստեփանեան Ղամբարեան, Կոստանդին Միքայէլեան Ալիխանեանց, Սիմէօն Զաւարեան, Աղէքսանդր Բալանթար, Միհրան Անանեան, Աւետիք Սահակեան, Աղէքսանդր Մելիք Աղարեան, Գրիգոր Աղաբաբեան, Նիկողայոս Անդրէասեան Բալանթարեանց, Սամսօն Յարութիւնեան, Յովհաննէս Սպենդիարեան և Արշակ Թադէոսեան։ Եօթներորդ՝ զծախս ճանապարհի և այլոց ներկայացուցչաց հոգաբարձութեան Թեմական Դպրանոցաց պարտին առնել ի հաշիւ գրամոց գանձարանի հոգաբարձութեանց, իսկ զնոյնպիսի ծախս կառավարչաց պարտին առնել թեմակալք ի հաշիւ կալուածական արդեանց։ Եւ ութերորդ՝ յանձն առնել անդամոց Սինոդիս Տ. Բարգէն վարդապետի զարձանագրութիւնս ժողովոյն վաւերացուցմամբ ստորագրութեամբք անդամոց նորին առանձինն յայտարարութեամբ իւրով առաջի առնել ի վախճանական տնօրէնութիւն Սինոդիս, պատուիրելով գանձապահի Սինոդիս տալ զծախս ճանապարհի և տնդեան Տ. Բարգէն վարդապետի վասն երթևեկութեան ի Տփխիս ըստ վերջին օրագրական կարգադրութեան Սինոդիս։ Անկախ զայսմանէ պատուիրել գործավարի հաշուարարական մասին Սինոդիս քաղել ի գործոց սորին տեղեկութիւնս զմտից և զծախուց յընթացս 1898—1903 ամաց, զորս և յանձնել Տ. Բարգէն վարդապետի։ Նոյնպէս պատուիրել գիւղատնտեսի ագարակի Մ. Աթոռոյ կազմել զտեղեկագիր զկալուածոց, որք ընդ հսկողութեամբ նորին, և մատուցանել Սինոդիս։ Ի 7 Սեպտեմբ. 1907 ամի ի Ս. Էջմիածին։

Անդամ Սինոդի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Կ. Պ. Ատենադպրի Բ. ՂԱՐԻԲԵԱՆ
Գործավարի Կ. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

№ 1872.

ՄԵՐ ԾԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ Ս. ՍԻՆՕԴԻՆ.

Ս. Սինոդն ի նկատի առնելով Ս. Էջմիածնի և առհասարակ բոլոր վանքապատկան կալուածների անբարեկարգ վիճակը՝ և որ գլխաւորն է նրանց չահագործման անկանոնութիւնը՝ իւր 3 Սեպտեմբերի 1907 թ. օրագրական վճռով բարեհաճ համաձայնութեամբ ի Տէր հանգուցեալ Վեհափառ կաթուղիկոսի՝ նշանակեց Թիֆլիսում ժողով Հոկտեմբերի 5-ին, որպէսզի հնարաւոր լինի այդ ժողովի օգնութեամբ ունենալ մի նպատակայարմար ծրագիր բարւոքելու և կանոնաւոր կերպով չահագործելու մեր բոլոր կալուածները, կարգելով ինձ ներկայացուցիչ Մայր Աթոռի կողմից և նախագահ այդ ժողովների։

Համաձայն Սինոդի 7 Սեպտեմբերի 1907 ամի թիւ 1872 հրամանի հետևեալ ամսի Հոկտեմբերի 3-ին ճանապարհուեցի Թիֆլիս և նախօրօք հրաւէր ուղարկելուց զատ՝ անձամբ ևս եղայ այն բոլոր յարգելի պարոնների մօտ, որոնք Սինոդի որոշման համաձայն պէտք է մասնակցէին յիշեալ ժողովներին, և նրանց համաձայնութիւնը ստանալով՝ սկսուեց առաջին ժողովը Հոկտեմբերի 6-ին և վերջացան նոյն ամսի 28-ին։ Սկզբում ունեցանք երկու ընդհանուր ժողով, ապա բաժանուեցին երկու սեկցիայի. ա) Տնտեսական և բ) Վարչական—Իրաւական։

Իւրաքանչիւր մասնաժողով (սեկցիա) կազմեց իւր գեկուցումը՝ և ներկայացրեց ընդհանուր ժողովին ի հայեցողութիւն, ունենալով մի չարք ժողովներ։ Երկու մասնաժողովների աշխատանքը վերջանալուց յետոյ տեղի ունեցան նորից չորս ընդհանուր ժողովներ, որոնք երկու մասնաժողովների ներկայացրած ծրագիրները՝ քննելուց և որոշ դիտողութիւններ անելուց յետոյ՝ հաստատեցին։

Սինոդի կարգադրութեան համաձայն ներկայ էին թեմական դպրանոցների հոգաբարձութեանց ներկայացուցիչները 1. Երևանից—պ. Պօղոս Կանդուրալեան, 2. Թիֆլիսից—պ. Նազարէթ Տիգրանեան, 3. Շուշուց—պ. Ալան Աթաբէգեան, 4. Բագուից—պ. Արամ Առաքելեան և Նոր-Նախիջևանից—Տ. Մուշէ վարդապետ Դանագեօզեան։ Կալուածոց կառավա-

բիչներ ներկայ էին. 1. Մարցի—պ. Սարգիս Սահակեան, 2. Գանձասարի և Խոթայ—պ. Տրդատ Մատինեան, 3. Զարեքայ—պ. Լևոն Տ. Աւետիքեան։ Սինոդի որոշման համաձայն ներկայ էին ժողովներին անտեսագէտներ—1. պ. պ. Պողոս Ղամբարեան. 2. Կոստանդին Ալիխանեանց. գիւղատնտեսներ, 3. Սիմէոն Զաւարեան, 4. Աղէքսանդր Բալանթար, 5. Աւետիք Սահակեան, 6. Արշակ Թադէոսեան, 7. հանքագէտ—Գրիգոր Աղաբաբեան, իրաւաբաններ 8. Նիկողայոս Բալաթարեանց, 9. Սամսոն Յարութիւնեանց, 10. Յովհաննէս Սպենդիարեան։ Բացի յիշեալ պարոններից մասնաժողովները գործի օգտակարութեան տեսակէտից իրենց կողմից հրաւիրեցին մասնակցելու աշխատանքներին նաև պ. պ. Տիգրան Գեօղալեան—գիւղատնտես, իրաւաբաններ՝ պ. պ. Մարկոս Դոլուխանեան, Սենեքերիմ Արծրունի, Յովսէփ Ամիրխանեան, Սմբատ Խաչատրեան, Արշակ Կուսիկեան, Տիգրան Յովհաննիսեան և Սիրական Տիգրանեան։

Գրաւոր զեկուցումն պատրաստել և իմ միջոցով ներկայացրել են ժողովին իւրաքանչիւրն իրեն յանձնուած կալուածների մասին—1. Մայր Աթոռի գիւղատնտես Կ. Մելիք-Շահնազարեան 2. Մարցի կառավարիչ Ս. Սահակեանը 3. Զարեքայ վանքի կառավարիչ Լևոն Տ. Աւետիքեանը և ժողովի հրաւիրուած հանքագէտ Գրիգոր Աղաբաբեանը, որոնք կցուած են գործին Մարցի կալուածքի մասին նախօրօք կազմուած մի ընդարձակ զեկուցման հետ միասին։ Սոյն յայտարարութեանս հետ ներկայացնում եմ Ս. Ատենիդ Տնտեսական և Վարչական մասնաժողովների կազմած երկու կարևոր ծրագիրները յիշեալ զեկուցումների և ընդհանուր ժողովների վեց արձանագրութիւնների հետ միասին։

Վերջին ընդհանուր ժողովը եղաւ անցեալ Հոկտեմբերի 28-ին, 29-ին լսելով Վեհափառ կաթուղիկոսի մահուան լուրը՝ նոյն օրն էլ ճանապարհուեցի Ս. Էջմիածին՝ արդէն վերջացրած լինելով իմ գործերը։ Մինչև այժմ չկարողացի աւելի շուտ զեկուցանել Ատենիդ ժողովների արդիւնքը, որովհետև սպասումէի ստանալ Ղարաբաղի կալուածների կառավարիչ պ. Տրդատ Մատինեանից իւր կառավարութեան ներքոյ գտնուած կալուածների և հանքերի մասին ընդարձակ զեկուցումն, որովհետև ժողովներին նա չէր ներկայացրել գրաւոր,

այլ միայն բերանացի համառօտ տեղեկութիւններ էր տուել, խոստանալով յետոյ ներկայացնել, որպէսզի այդ զեկուցումն ես կցելով գործին միասին ներկայացնեմ Ատենիդ, բայց մինչև այժմ չատացայ, չնայած որ տեղւոյն Ս. Առաջնորդի միջոցով առանձին նամակովս խնդրել եմ յիշեալ կառավարչից չտապել ուղարկել իւր զեկուցումն, ուստի խնդրում եմ Ատենիդ՝ կարգադրել ստանալ և այդ կարևոր զեկուցումն Դաբաբաղի կալուածների մասին։

Ս. Ատենիդ կողմից ինձ վրայ տրուած քաղցր պարտականութիւնը կատարելով՝ խնդրում եմ Սինօդիդ բարեհաճ կարգադրութիւնը ի կատար ածելու յիշեալ կարևոր ծրագիրները, որպէսզի թղթի վրայ մնաց չատ այլ ծրագիրների նման։ Պարաք եմ համարում յայտնել Սինօդիդ, որ երբ վերոյիշեալ պարոններին ժողովի էի հրաւիրում կազմելու մեր կալուածների չահագործման համար մի նպատակայարմար ծրագիր—չատերն արտայայտում էին իրենց թեքահաւատ վերաբերմունքը, որ յոյս չունեն իրենց կազմած ծրագիրն Էջմիածնի կողմից իրագործուած տեսնել, որովհետև, ինչպէս ասում էին, չատ անգամ են այս ու այն ծրագիրը կազմել Էջմիածնի համար, բայց բոլորն էլ մնացել են առանց ուշադրութեան։ Ուրեմն որպէսզի ի չարը չգործադրենք նրանց հաւատն այս անգամ ևս, և ապարդիւն չանցնեն կրած նեղութիւնները, անհրաժեշտ է ի կատար ածել այդ ծրագիրները, որոնց իրագործումից է կախուած Մ. Աթոռի և՛ տնտեսական և՛ բարոյական բարեկեցումն։

Ցաւոնի է՝ որ հետզհետէ վերանում են և համարեա չքացել են բոլոր այն պատմական իրաւունք ստացած տուրքերը, որ այս կամ այն ճանապարհով Էջմիածինը ստանում էր ժողովրդից, այժմ Էջմիածնի տնտեսական վիճակը անցողական շրջանի մէջ է գտնուում, որ մի կողմից վերանում են յիշեալ տուրքերը, միւս կողմից Էջմիածնի դրամական նեղ վիճակը ստիպում է մեզ լուրջ ուշադրութիւն դարձնել մեր բազմաթիւ արժէքաւոր կալուածների չահագործման վրայ, և մենք անպայման կազատուենք ներկայ դրամական ճգնաժամից՝ եթէ յիրաւի լուրջ ուշադրութիւն դարձնենք և կանոնաւոր չահագործենք մեր բոլոր կալուածքները.

Անդամ Սինօդի ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

10 Յունվարի 1908 թիւ
Ս. Էջմիածին.

ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ՆԻՍՏ Ա.

1907 թիւ հոկտեմբերի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի վանքի եկեղեցական հիւրատան դահլիճում կայացաւ վանքապատկան և եկեղեցական կալուածների կանոնաւոր կերպով շահագործելու մասին խորհրդակցելու համար ս. Սինոդի կողմից հրաւիրուած մասնագէտների, Թեմական Դպրանոցների հոգաբարձական մարմինների ներկայացուցիչների և վանական կալուածների կառավարիչների ժողովի առաջին նիստը։

Ներկայ էին Թեմական Դպրանոցների հոգաբարձութիւնների կողմից՝ Տ. Մուշէ վարդապետ (Նոր-Նախիջևանի), պ. պ. Կանդուրալեան Պօղոս (Երևանի), Աթաբէկեան Ասլան (Շուշու) Առաքելեան Արամ (Բագուի դպրոցների հոգաբարձական մարմնի կողմից). մասնագէտներ՝ պ. պ. գիւղատնտեսներ Քալանթար Ալէքսանդր, Զաւարեան Սիմէօն. Սահակեան Աւետիք, հանքարան՝ Աղաբաբեան Գրիգոր. Իրաւագէտներ՝ պ. պ. Ղամբարեան Պօղոս, Քալանթարեան Նիկողայոս, Սպենդիարեան Յովհաննէս, վանքական կալուածների կառավարիչներ. պ. պ. Սահակեան Սարգիս (Մարցի), Տէր-Աւետիքեան Լեոն (Զարեքայ) և Մատինեան Տրդատ (Ղարաբաղի)։

Ժողովը բաց արաւ Տ. Բաբդէն վարդապետը բացատրելով ս. Էջմիածնի և հայ ժողովրդի փոխադարձ յարաբե-

բութիւններն ու պարտաւորութիւնները։ Նա մատնացոյց անելով ս. Էջմիածնի նիւթական կարիքների վրայ, յայտ յայտնեց, որ սոյն ժողովը ուղիղ ճանապարհ և միջոց ցոյց կըտայ կարգաւորելու մեր վանքապատկան կալուածները, որոնց արդիւնքով պիտի կառավարուին ոչ միայն Ս. Էջմիածինն ու Ճեմարանն, այլ և ամեն տեսակ ազգային ուսումնարանական և Աստուածահաճոյ հաստատութիւններ։

Ապա նա իւր գործն աւարտած համարելով յայտարարեց ժողովը բացուած և յայտնեց, որ թէպէտ ինքը ս. Սինոդի կողմից նշանակուած է նախագահ սոյն ժողովին, բայց և այնպէս բարեւոք է համարում, որ ժողովը ինքն ընտրէ իրեն համար նախագահ և քարտուղար։ Այս առաջարկութեան առթիւ եղան դիտողութիւններ, թէ քանի որ ժողովականներն իրենց ազատ կամքով են հաւաքուած ժողովի, ուստի պէտք է իրեն ժողովին էլ թոյլատրուած լինէր իրեն համար նախագահ ընտրելու իրաւունքը, որ անբռնաբարելի է. և ոչ թէ ս. Սինոդը իւր կողմից նշանակած լինէր նախագահ։ Ի վերջոյ ժողովը որոշեց իւր նիստերը չարունակել Տ. Բարգէն վարդապետի նախագահութեամբ։ Իսկ ժողովի քարտուղար ընտրուեց միաձայն Տ. Մուշէ վարդապետը։

Այնուհետև տեղի ունեցաւ մտքերի երկարատև փոխանակութիւն ժողովի պարապմունքի, ծրագրի և իրաւանց սահմանի մասին։ Ժողովականներից ոմանք հաղորդելով փաստեր, թէ ինչպէս անցեալում ես Հոգևոր իշխանութեան առաջարկութեամբ սոյնանման ժողովների ձեռքով կազմուած են եղել զանազան ծրագրներ, թէ ուսումնարանական և թէ տընտեսական կալուածական խնդիրների մասին, բայց մինչև օրս էլ դրանք մնացել են առանց գործադրութեան, երկիւղ էին կրում, թէ մի գուցէ այդ ժողովի պարապմունքներն էլ մնան առանց հետևանքի։ Սակայն ժողովը ի նկատի առնելով այն հանգամանքը, որ մինչև օրս ոչ միայն չկայ մի ընդարձակ մշակուած ծրագիր մեր վանական կալուածների նպատակայարմար կերպով չահագործելու և կառավարելու եղանակի մասին, այլ և նոյն իսկ սկզբնական քայլեր անգամ կատարուած չեն դրանց ուսումնասիրութեան համար, և հասարակական կարծիքի կամ գիտակցութեան մէջ էլ հաստատուած չէ մի ընդհանուր ծրագիր, որի գործադրութեան վրայ պըն-

դէր ու պահանջէր ժողովուրդը, բարւոք համարեց տալ այդ-պիսի ընդհանուր ծրագրի ուրուագիծը, որքան որ այդ անելու թոյլ կտան ժողովի ձեռքին գտնուած նիւթերը։

Այնուհետև ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ժողովի պարապմունքներն արդիւնաւոր կացուցանելու համար անհրաժեշտ է նախապէս որոշել այն առարկաները, որոնցով զբաղուելու է սա, որոշուեց կազմել օրակարգի նիւթերն ու խնդիրները։ Եւ որովհետև այդ անելու համար նախապէս հարկաւոր էր ընդհանուր ծանօթութիւն ձեռք բերել ժողովի տրամադրութեան տակ գտնուած նիւթերի մասին, ուստի և որոշուեց նախ լսել վանական կալուածների կառավարիչների զեկուցումները, ապա անցնել այդ կալուածները կառավարելու եղանակի և կառավարող մարմնի իրաւանց և յարաբերութեանց եղանակի մասին խորհրդակցելու։

Ըստ այդմ իրենց գրաւոր և (լրացուցիչ) բանաւոր զեկուցումները տուին պ. պ. Սահակեան Սարգիս—Մարցի կալուածների մասին, Մատինեան Տրդատ՝ Գանձասարի և Խոթայ կալուածների մասին, Տէր Աւետիքեան Լեոն՝ Զարեքայ կալուածների մասին, Տ. Մուշէ վարդապետ և պ. Յ. Սպենդիարեան բանաւոր զեկուցին Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում եղած կալուածների մասին, Տ. Բարդէն վարդապետ կարդաց Ս. Էջմիածնի կալուածների և Բջնու անտառի մասին մասնագէտների կազմած զեկուցումները։ Ս. Էջմիածնի կալուածների զեկուցումը կազմել էր գիւղատնտես Կ. Մելիք Շահնազարեանը։ Այնուհետև մի քանի պարոններ, գլխաւորապէս պ. պ. Զաւարեան Սիմէօն և Քալանթար Ալեքսանդր բանաւոր տեղեկութիւններ հաղորդեցին վանական և եկեղեցական ուրիշ, համեմատաբար մանր կալուածների մասին, ինչպէս են Դայլարու, Ս. Խաչի, Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու և այլն։

Ի վերջոյ ժողովը ցանկութիւն յայտնեց իւր նիստերին հրաւիրուած տեսնել նաև Ս. Էջմիածնի վանքի փաստաբանին, գիւղատնտեսին և մի քանի ուրիշ մասնագէտ գիւղատնտեսներ և իրաւագէտ անձեր, ինչպէս են պ. պ. Դոլուխանեան Մարկոս, Տիգրանեան Սիրական, Արծրունի Սենեքերիմ, Ամիրխանեան Յովսէփ, Խաչատրեան Սմբատ, Գեօղալեան Տիգրան, Մելիք-Բախտամեան Յակոբ, Յովհաննիսեան Տիգ-

ման և Կուսիկեան Արշակ։ Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 10½-ին։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
Անդամ Սինոդի Բարգէն վարդապետ

Անդամք՝ Պ. Կանդուրալեան Յովհ. Սպենդիարեան
Ա. Սահակեան Պողոս Ղամբարեան
Ս. Զաւարեան Ս. Սահակեան
Գ. Ազարաբեան Ա. Քալանթար

Քարտուղար՝ Մուշէ վարդապետ.

ՆԻՍՏ Բ.

1907 թիւ Հոկտեմբերի 7-ին, ցերեկուայ ժամը 11½-ին կայացաւ եկեղեցական կալուածների բարւոք կառավարութեան և շահագործութեան եղանակների մասին խորհրդակցելու համար կազմուած ժողովի նիստը Տ. Բարգէն վարդապետի նախագահութեամբ։ Ներկայ էին պ. պ. Աթաբէգեան Ասլան, Ազարաբեան Գրիգոր, Առաքելեան Արամ, Զաւարեան Սիմէոն, Թադէոսեան Արշակ, Կանդուրալեան Պողոս, Ղամբարեան Պողոս, Մատինեան Տրդատ, Սպենդիարեան Յովհաննէս, Սահակեան Աւետիք, Սահակեան Սարգիս, Տէր-Աւետիքեան Լեոն, Տիգրանեան Նազարէթ և Քալանթար Ալէք սանդր, քարտուղար Տ. Մուշէ վարդապետ։

Ժողովը նախ զբաղուեցաւ վանական կայքերի մասին իւր ձեռին գտնուած և որպէս նախորդ նիստում զեկուցուած նիւթերի գնահատութեամբ և եկաւ այն եզրակացութեան, որ թէպէտ դրանք մեր ազգային—եկեղեցական կալուածների, նրանց արդի կացութեան և շահագործման եղանակի մասին փոքր ի շատէ ընդհանուր տեղեկութիւն տալիս են, բայց բոլորովին անբաւարար են կազմելու համար այն մանրամասն ծրագիրը, որը կարելի լինէր տալ գործադրութեան։ Դրա համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ մանրամասն և ճշգրիտ զեկուցումներ, մասնագէտների ձեռքով կատարուած ուսումնասիրութիւններ և հետազօտութիւններ, կազմել տնտեսական ուրուագծեր (планъ хозяйства) և այլն։ Սակայն որքան

էլ որ սոյն ժողովը նիւթերի պակասութեան պատճառով անկարող լինի մանրամասն ծրագիր կազմել ու գործին ձեռնարկել, բայց և այնպէս նա այդ կարող է անել ընդհանուր գծերով,—անել ընդհանուր ցուցումներ և դիտողութիւններ, իսկ որտեղ որ հնարաւոր է, կարող է մտնել նաև մանրամասնութիւնների մէջ։

Բայց որովհետև մինչև այժմ կատարուած փորձերն ու կալուածների արդի կացութիւնը ոչ մի գրաւական չեն տալիս՝ թէ մեր հոգևորականութիւնը, ձեռնհաս և մասնագէտ անձերի պակասութեան բացակայութեան պատճառով, պիտի կարող լինի ապագայում ի կատար ածել այն ծրագիրը, որ պիտի մշակէ սոյն ժողովը, իսկ վանական կալուածների կառավարութեան և շահագործութեան անկօնտրոլ եղանակը միմիայն քայքայել և տնտեսական ներկայ ճգնաժամին է հասցրել գործը, ժողովը գտնում է, որ անհրաժեշտ է նախ և առաջ կանոնաւորել վանական կալուածների կառավարութեան գործը՝ գլխաւոր ղեկը տալով ժողովրդի ձեռքը։ Ժողովը, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, կարծում է, որ մանր կալուածների կառավարութիւնը պիտի յանձնուի ժողովրդի ընտրութեամբ կազմուած տեղական յատուկ հոգաբարձութիւնների, իսկ խոշոր կալուածների կառավարութիւնը—Թեմական Հոգաբարձութիւններին։ Բոլոր Հոգաբարձութիւնների մէջ որոշ կապ և միութիւն հաստատելու համար էջմիածնում պիտի հաստատուի մի Կենտրոնական Մարմին։

Ժողովը վերև արծարծուած խնդիրների շուրջն երկարաւոր և բազմակողմանի կերպով մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ որոշեց կազմել երկու մասնաժողով. Իրաւական Վարչական և Տնտեսական։ Իրաւական—Վարչական մասնաժողովին յանձնարարուեց մշակել վանական կալուածների բարեկ կառավարութեան եղանակը ժողովրդի մասնակցութեամբ և որոշել այդ կալուածները կառավարելու համար կազմուելիք մարմինների իրաւասութեան և յարաբերութեանց խնդիրները։ Այդ մասնաժողովի մէջ մտան Տ. Բարգէն վարդապետ, պ. պ. Սպենդիարեան Յովհաննէս, Տիգրանեան Սիրական, Ամիրխանեան Յովսէփ, Յովհաննիսեան Տիգրան, Արծրունի Սենեքերիմ, Յարութիւնեան Սամսոն, Խաչատրեան Սմբատ, Դելուխանեան Մարկոս, Կուսիկեան Արշակ, Քալան-

Թարեան Նիկողայոս, Տիգրանեան Նազարէթ, Ղամբարեան Պողոս և Սահակեան Աւետիք։ Իսկ Տնտեսական մասնաժողովին յանձնարարուեց կազմել մի ծրագիր, որով պիտի առաջնորդուել կալուածների չահագործմանը ձեռնարկելու համար, որքան որ այդ հնարաւոր կըլինի անել ի նկատի ունենալով ժողովին հաղորդուած գրաւոր և բանաւոր տեղեկութիւնները։ Այս մասնաժողովի մէջ մտան պ. պ. Քալանթար Ալէքսանդր, Զաւարեան Սիմէօն, Թադէոսեան Արշակ, Մատինեան Տրդատ, Սահակեան Մարգիս, Տէր Աւետիքեան Լեոն, Կանդուրալեան Պողոս, Աթաբէգեան Ասլան, Աղաբաբեան Գրիգոր, Առաքելեան Արամ, Գեօզալեան Տիգրան, Մելիք-Բախտամեան Յ. և Տ. Մուշէ վարդապետ։ Սոյն Մասնաժողովին յանձնուեցան ժողովի ձեռին գտնուած բոլոր գրաւոր զեկուցումները վանական կալուածների մասին, որոնք յետոյ, մասնաժողովների զեկուցումների հետ միասին պիտի կցուին ժողովի արձանագրութիւններին։ Ժողովը փակուեց ցերեկուայ ժամը $3^1/_2$-ին։

Նախագահ՝

Անդամ Սինոդի Բարգէն վարդապետ

Անդամք՝ Պ. Կանդուրալեան — Պողոս Ղամբարեան
Ս. Սահակեան — Ս. Սահակեան
Ս. Զաւարեան — Ա. Թադէոսեան
Գ. Աղաբաբեան — Ն. Տիգրանեան
Յով. Սպենդիարեան

Քարտուղար Մուշէ վարդապետ.

ՆԻՍՏ Գ.

1907 թ. Հոկտեմբերի 21-ին ցերեկուայ ժամը 12-ին՝ Տ. Բարգէն վարդապետի նախագահութեամբ կայացաւ վանական կալուածների բարւոք կառավարութեան մասին հրաւիրուած խորհրդի երրորդ նիստը։ Ներկայ էին պ. պ. Աթաբէգեան Ասլան, Աղաբաբեան Գրիգոր, Ամիրխանեան Յովսէփ, Գեօզալեան Տիգրան, Զաւարեան Սիմէօն, Դօլուխանեան Մարկոս, Լիսիցեան Ստեփան, Խաչատրեան Սմբատ, Կան-

դուրալեան Պողոս, Կուսիկեան Արշակ, Ղամբարեան Պողոս, Մելիք-Բախտամեան Յակոբ, Յարութիւնեան Սամսոն, Յովհաննիսեան Տիգրան, Սպենդիարեան Յովհաննէս, Սահակեան Աւետիք, Սահակեան Սարգիս, Տիգրանեան Նազարէթ և Ալէքսանդր Քալանթար։ Քարտուղար Տ. Մուշէ վարդապետ։

Կարդացուեցան նախորդ երկու նիստերի արձանագրութիւնները և հաստատուեցան։ Ապա հայր նախագահը յայտնելով, որ նախորդ նիստում եղած որոշման համաձայն կազմուած երկու մասնաժողովները—Տնտեսական և Իրաւական—Վարչական—արդէն իրենց աշխատանքներն աւարտած են, առաջարկեց լսել այդ մասին կազմուած զեկուցումներն ու կարևոր դիտողութիւններ անելուց յետոյ վերջնական խմբագրութիւն տալ դրանց և որպէս սոյն ժողովի եզրակացութիւն ներկայացնել ս. Սինոդին։

Տնտեսական մասնաժողովի նախագահ պ. Քալանթար Ալէքսանդր կարդաց իւր զեկուցումը Տնտեսական մասնաժողովի գործունէութեան մասին, որից երևում է, որ Մասնաժողովը ունեցել է վեց նիստ և ի մօտոյ ծանօթանալով կալուածների մասին առձեռն եղած նիւթերի հետ, կազմել է այն ծրագիրը և միջոցները, որ հարկաւոր են կալուածների ուսումնասիրութեան գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու և առաջ տանելու համար. միևնոյն ժամանակ Մասնաժողովը արել է նաև մի քանի մանրամասն ցուցումներ, ինչպէս օրինակ Մարցի անտառների չահագործման վերաբերմամբ։ Ժողովը մի քանի մանր դիտողութիւններից յետոյ ընդունեց Տնտեսական մասնաժողովի զեկուցումն և որոշեց այն կցել սոյն արձանագրութեան։

Ապա Տ. Բարգէն վարդապետը, որպէս նախագահ Իրաւական—Վարչական Մասնաժողովի, կարդաց նոյն մասնաժողովի քարտուղար պ. Ս. Տիգրանեանի կազմած արձանագրութիւնները, որ բաղկացած էին երկու մասից։ Առաջին մասի մէջ արծարծուած էր մեր վանական կալուածների կառավարութեան գործը կանոնաւորելու համար ժողովրդից ընտրուած յատուկ մարմիններ կազմակերպելու խնդրին, իսկ երկրորդ մասի մէջ յօդուածական կարգով առաջ են բերուած առաջին մասի մէջ արծարծուած դրութիւնները։

Ժողովը բաւական երկար ժամանակ դիտողութիւններ

անելով Իրաւական—Վարչական մասնաժողովի կազմած արձանագրութիւնների մասին, գտաւ, որ թէզիսները խմբագրուած են ոչ բաւարար որոշ և պարզ սահմաններով, ուստի և որոշուեց նախ քան մասնաժողովի կազմած նախագծի քննութեան ըստ էութեան անցնելը, խնդրել մասնաժողովի անդամ պ. Յովհաննէս Սպենդիարեանին յաջորդ ժողովին ներկայացնել պարզ և որոշ ձևակերպած այն սխեման, որ Իրաւական—Վարչական մասնաժողովը մշակել է իւր նիստերում մեր վանական և եկեղեցական կայք ու կալուածները կառավարելու եղանակի մասին։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
Անդամ Սինոդի Բարգէն վարդապետ

Անդամք՝ Յովհաննէս Սպենդիարեանց
Սմբատ Խաչատրեան Սարգիս Սահակեան
Տիգրան Գեօղչեան Նաղարէթ Տիգրանեան
Սիմէօն Զաւարեան Յովսէփ Ամիրխանեան
Գրիգոր Աղաբաբեան

Քարտուղար՝ Մուշէ վարդապետ.

ՆԻՍՏ Դ.

1907 թ. Հոկտեմբերի 22-ին, դերեկուայ ժամը 11-ին կայացաւ վանական կալուածքների բարեկարգման մասին խորհրդակցելու համար կազմուած ժողովի չորրորդ նիստը Տ. Բարգէն վարդապետի նախագահութեամբ, քարտուղար Տ. Մուշէ վարդապետ, ներկայ էին Աղաբաբեան Գրիգոր, Ամիրխանեան Յովսէփ, Արծրունի Սենեքերիմ, Զաւարեան Սիմէօն, Խաչատրեան Սմբատ, Կանդուրալեան Պօղոս, Մելիք-Բախտամեան Յակոբ, Յարութիւնեան Սամսոն, Սպենդիարեան Յովհաննէս, Սահակեան Աւետիք, Սահակեան Սարգիս, Քալանթար Ալէքսանդր։

Նախ կարդացուեց նախընթաց ժողովի արձանագրութիւնը և հաստատուեց։ Ապա պ. Յ. Սպենդիարեանը ներկայացրեց նախորդ ժողովի որոշմամբ և յանձնարարութեամբ կազմած հետևեալ ուրուագիծը՝ վանական և եկեղեցական

կալուածները կառավարելու սխեմայի մասին.—«Միացեալ
«ժողովը, լսելով իրաւաբանական սեկցիայի ներկայացրած զե-
«կուցումը և նկատի առնելով ժողովի մի քանի անդամների
«յայտնած դիտողութիւնները, դտաւ, ա) որ ղեկուցման մէջ
«որոշակի չէ չնչտուած ծուխի, իբրև ինքնուրոյն մարմնի
«մասնակցութիւնն եկեղեցապատկան կալուածների կառավա-
«րութեան մէջ, ինչպէս չէ որոշուած ծուխի և թեմական
«ժողովի փոխադարձ յարաբերութիւնները և նրանց իրաւա-
«սութեան սահմանները. բ) վանքապատկան և եկեղեցապատ-
«կան կալուածների կառավարութեան սխեմը յայտնապէս չէ
«ընդգծուած, և գ) վանքապատկան կալուածների հետ պէտք
«է յիշել և եկեղեցապատկան կալուածների մասին, ուստի
«հիմնուելով իրաւաբանական սեկցիայի ընդունած սկզբունք-
«ների վրայ, միացեալ ժողովը որոշում է, համառօտ և ընդ-
«հանուր գծերով, հայոց եկեղեցու պատկանեալ համայն
«ստացուածքի հետեւեալ սխեմը։—Ա. իւրաքանչիւր թեմի
«շրջանում գտնուած վանքապատկան կալուածների տէրն ու
«տնօրէնը հանդիսանում է թեմական պատգամաւորական
«ժողովը։ Նրա իրաւասութեան ենթակայ են տեղական մաս-
«նաժողովները կամ գործակալութիւնները, որոնց անմիջա-
«կան կառավարութեան և շահագործմանը յանձնուում են
«յիշեալ կալուածները, համաձայն թեմական ժողովում ըն-
«դունուած ծրագրների և հրահանգների, այդ մասնաժողովների
«թիւը իւրաքանչիւր թեմում, որպէս և գործունէութեան
«շրջանը, որոշում է թեմական պատգամաւորական ժողովը։
«Տեղական մասնաժողովների գործունէութեան վրայ հսկում է
«թեմական խորհուրդը, որն ընտրւում է թեմական ժողովից
«որոշ ժամանակով և նրա մշտական կատարողական օրգանն է։
«Բ. եկեղեցապատկան գոյքի տէր և տնօրէն եկեղեցական
«ծուխն է. նա իւր իրաւասութեան սահմանում գործում է
«իբրև ուրոյն ինքնավարական մարմին. (տես օր. 1229 և
«1232 յօդ. XI հ. I մ.)։ Եկեղեցական ստացուածքի անմի-
«ջական կառավարութիւնը յանձնւում է ծխական խորհրդին,
«որն ընտրւում է և իւր գործունէութեան մէջ հրահանգւում
«է ծուխից։ Տարին մի անգամ ծուխը ներկայացնում է իւր
«գործունէութեան տեղեկագիրը ի գիտութիւն և ի հայեցո-
«ղութիւն թեմական ժողովին, որին պատկանում է միջա-

«մտութեան իրաւունքը նկատուած ապօրինութեան և զեղ-
«ծումների դէպքում։ Բարձրագոյն Ինստանցիան վարչական
«սխեմի մէջ հանդիսանում է կենդրոնական ժողովը, որի
«անդամներն ընտրւում են իւրաքանչիւր թեմի պատգամա-
«ւորական ժողովից որոշ թուով։ Կենդրոնական ժողովը
«ընտրւում է չորս տարին մի անգամ և գումարւում է էջ-
«միածնում։ Նա ունի այն իրաւունքները, որոնք յիշատակուած
«են իրաւաբանական սեկցիայի զեկուցման մէջ։»

Սոյն ուրուագիծը ժողովում երկարատև և մանրամասն քննութեան ու վիճաբանութիւնների նիւթ եղաւ.—ոմանք առաջարկում էին պահպանելով ծուխի աւտօնօմ գոյութիւնը, կազմել նաև մի քանի ծխերի միութիւններ կամ գործակալութիւններ, իրենց շրջանի վերաբերեալ կուլտուրական և այլ հանրային ընդհանուր բնաւորութիւն ունեցող հաստատութիւնների մասին հոգալու համար, այդ դէպքում, մի քանիսի կարծիքով, գործակալութիւններն են կառավարում նաև իրենց շրջանի վանքապատկան կալուածները և ենթարկւում են թեմական ժողովին, որը տէր և տնօրէն է հանդիսանում թեմի վանքապատկան կալուածների։ Բարձրագոյն Ինստանցիան կազմում է կենդրոնական ժողովը։ Այս չորս աստիճանի ժողովները ունին իրենց գործադիր մարմինները,—խորհուրդները։ Ոմանք առաջարկում էին եկեղեցական կայքերի կառավարութիւնը պահել ծխի և ծխերի միութեան կամ գործակալութեան ձեռին, իսկ վանական կառավարութիւնը յանձնուի թեմական ժողովին, որը միանգամայն տէր և տնօրէն է հանդիսանում այդ կայքերի և միայն հսկողութիւն ունի ծխերի վրայ։ Պ. Զաւարեան Սիմէօն առաջարկում է մի այսպիսի սխեմա.—«Գոյութիւն ունեցող ծխերում, գործակա-
«լութիւններում, թեմերում և կենդրոնում հաստատւում են
«ծխական, շրջանային, թեմական և կենդրոնական տնտեսա-
«կան խորհուրդներ (ընտրողական սկզբունքի վրայ), համա-
«պատասխան գործադիր մարմիններով։ Խորհուրդները հոգ
«են տանում իրենց իրաւասութեան տակ գտնուած ազգային—
«եկեղեցական գոյքերի պահպանութեան և շահագործութեան
«համար. հանդիսանում են վերահսկիչներ իրենց շրջանում
«գտնուած աւելի մանր մարմինների նկատմամբ և համա-

«չափ կերպով բաշխում են ընդհանուր գոյքերից ստացուած «եկամուտները։»

Եղան դիտողութիւններ, թէ վանական-եկեղեցական կայքերի կառավարութեան համար կազմուելիք մարմինների ստիճանական թիւը, չորս հատ—ծուխ, գործակալութիւն, թեմ և կենտրոն—չատ է, որով և պիտի ծանրանայ ու դժուարանայ կառավարութեան գործը, ուստի և առաջարկուեց եկեղեցական կայքերի կառավարութեան վերաբերմամբ ծուխը ճանաչել իբրև աւտոնոմ մարմին, որ կ'ենթարկուի թեմական ժողովի հսկողութեան, իսկ վանական կալուածները կառավարուին թեմական և կենտրոնական ժողովներով՝ իրենց խորհուրդների ձեռքով։ Թեմական ժողովները հարկաւորութեան դէպքում կարող են կազմել նաև Գործակալական մարմիններ, գործակալութեան շրջանում գտնուած վանքապատկան կայքերը կառավարելու համար։ Նոյն նպատակով առաջարկուեց նաև՝ բաւականանալ միմիայն մէկ կենտրոնական ժողովով կամ խորհրդով՝ ընտրուած թեմական պատգամաւորների միջոցով։

Ժողովում մտքերի բաւական երկար փոխանակութիւն եղաւ նաև կալուածներից ստացուած եկամուտների գործադրութեան և բաշխման նկատմամբ։ Ոմանք կարծում էին, որ ոչ ծուխը և ոչ էլ թեմը իրաւունք չպիտի ունենան իրենց ստացած ամենայն տեսակ եկամուտները գործ դնել լոկ իրենց տեղական պէտքերի վրայ. այդ իրաւունքը պատկանելու է միմիայն կենտրոնին, որը ինկատի առնելով թեմերի կարիքները, ըստ այդմ էլ կըկատարէ ընդհանուր եկամուտների բաշխումը թեմերի վրայ. այդ դէպքում, ոմանց կարծիքով, պէտք է ի նկատի առնուի իւրաքանչիւր թեմի հայ ժողովրդի թիւը և այդ թուի համեմատ էլ կատարուի բաշխումը։—Ոմանք կարծում էին, թէ եկեղեցական կայքերի ու դրամագլուխների կառավարութեան և ստացուած եկամտի գործադրութիւնը պէտք է լինի ծուխի իրաւունքը, իսկ վանական կալուածների արդիւնքի բաշխման իրաւունքը պիտի պատկանի կենտրոնին։—Սակայն ոմանց կարծիքով էլ ինչպէս ծուխն եկեղեցական եկամուտների վերաբերմամբ, այնպէս էլ թեմը վանական կալուածներից ստացուած մուտքերի վերաբերմամբ բոլորովին ազատ պիտի լինին այդ մուտքերը լիովին գործ դնե-

լու իրենց տեղական կարիքները լրացնելու համար։—Իսկ ոմանք ևս անհրաժեշտ էին համարում չքննանալ թեմերի վրայ, բայց պարտաւորացնել, որ իւրաքանչիւր թեմ իւր եկամուտների մի յայտնի %-ը պարտական լինի յատկացնել կենտրոնական ֆոնդին, որի միջոցներով պիտի պահպանուին ընդհանուր բնաւորութիւն ունեցող հանրային հաստատութիւնները և հոգացուին հասարակական կարիքները։

Ոչ նուազ ուշադրութեան առարկայ դարձաւ նաև «Տէր և Տնօրէն» բառերի գործադրութիւնը։ Ոմանց կարծիքով այդ բառերը բովանդակելով իրենց մէջ «սեփականութեան իրաւունքի, տիրապետութեան» դաղափարը, կարող չեն յատկացնուիլ այնպիսի մարմինների, որոնք սեպհականութեան իրաւունք չունին՝ մանաւանդ քանի դեռ գոյութիւն ունի Պոլսոժենիան, որը հիմք է ծառայում ժողովին կազմելիք սխեմայի։ Պոլսոժենիայով սեփականութեան իրաւունքը պատկանում է հայ եկեղեցուն, որը ի դէմս ս. Էջմիածնի ներկայանում է իրաւական մարմին, իսկ ազգը, ժողովուրդը մի այդպիսի մարմին չէ կազմում։ Տէր և տնօրէն կարող է լինել միմիայն հայ եկեղեցին իւր լրութեամբ։ Իսկ այդ իրաւունքին ձեռնամուխ լինելը համարելի է չափազանց վտանգաւոր, վնասակար և նոյն իսկ կեանքի ներկայ պայմաններում աննպատակայարմար և անկարելի։ Իսկ ոմանք էլ կարծում էին, թէ քանի որ եկեղեցական և վանական կալուածները պատկանում են համայն հայ ժողովրդին, իսկ Էջմիածինը կամ հայ եկեղեցին իսկապէս անուանական տէր է հանդիսանում այդ կալուածներին, պէտք է որ սոյն ժողովի նպատակը լինի այդ կալուածների de facto տէր դարձնել հայ ժողովուրդը, և այդ իսկ նպատակով անհրաժեշտ է տէր և տնօրէն ճանաչել եկեղեցական կալքերի համար ծուխը, իսկ վանքականի համար՝ թեմը։

Ժողովը ի նկատի առնելով, որ խնդիրն արդէն բաւականաչափ լուսաբանուած է, յանձնարարեց իրաւաբաններ պ. պ. Յ. Սպենդիարեանին, Ս. Յարութիւնեանցին և Ս. Խաչատրեանցին առաջիկայ ժողովին ներկայացնել վանական և եկեղեցական կալուածների կառավարչութեան պարզ և որոշ կազմած սխեման, հիմնուելով Իրաւական—Վարչական մասնաժողովի արձանագրութեան պ. Յ. Սպենդիարեանի ներ-

կայացրած ուրուագծի և վերջին երկու ժողովներում արծարծուած մտքերի ու դիտողութիւնների վրայ։

Ապա ժողովը զբաղուեցաւ պ. Ս. Զաւարեանցի հետեւեալ առաջարկութեամբ։ «Ս.) Հարկ անհրաժեշտ է. որ ս. Սինոդն այժմէն իսկ կարգադրէ, որպէս զի կանխատորիանները, վանահայրերը և ս. Սինոդին ենթարկուած ամեն տեսակ հաստատութիւններ և անհատներ այսուհետև վանական կալուածների վերաբերեալ ոչ մի ձեռնարկ, ոչ մի կապալ, ոչ մի պայմանագիր իրաւունք չունենան կազմելու առանց գործում չշահագրգռուած մասնագէտների և իրաւագէտների խորհրդակցութեան, համաձայնութեան և պատասխանատուութեան. Բ.) Ազգային-եկեղեցական ընդհանուր գոյքերից, ինչպէս և այլ աղբիւրներից ստացուած եկամուտները գործադրուելու են կրթական, կրօնական՝ բարեգործական և այլ ազգային ընդհանուր պէտքերի վրայ։ Բաշխումը նպատակայարմար կերպով կատարելու համար վանական կալուածների եկամուտներին պէտք է աւելացնել նաև այն յատուկ եկամուտները, որ ունին ազգային այլ և այլ հաստատութիւնները (դպրոցները, եկեղեցիները և այլն։) Այդ ընդհանուր եկամտից պէտք է ապահովել ա. Վեհարանի, Ճեմարանի և Էջմիածնի միաբանութեան պէտքերը իբրև ազգային-եկեղեցական կենտրոնական հիմնարկութիւնների. բ. Մնացած գումարը պէտք է բաժանել թեմերի, շրջանների, ծխերի մէջ ըստ ազգաբնակութեան թուի և համեմատական կարիքի. գ) Թիւրքիայի և այլ երկրներում ապրող հայերի բաժինը որոշելու համար հաւաքել տեղեկութիւններ այդ վայրերում գտնուած ազգային-եկեղեցական գոյքերի և եկամուտների մասին։»

Սոյն առաջարկութիւնը քննութեան ենթարկելուց յետոյ ժողովը որոշեց իբրև սկզբունք ճանաչել և այժմէն իսկ գործադրելի համարել այդ առաջարկութեան առաջին մասը, որով վանական կալուածներին վերաբերեալ ոչ մի ձեռնարկ պայման, կապալ և այլն չպիտի կազմուի առանց մասնագէտ անձերի խորհրդակցութեան, հաւանութեան և պատասխանատուութեան։ Իսկ առաջարկութեան մնացեալ երկու կէտերը իբրև նիւթ յանձնարարել նոր ընտիր եռանձնեայ իրաւագէտների մանաժողովի ուշադրութեան։

Ի վերջոյ ժողովը ի նկատի առնելով ժողովին յանձնա-

բարուած ձեռնարկութեան առաջնակարգ կարեորութիւնը, այլ և երկիւղ կրելով, թէ մի գուցէ այս պարապմունքի արդիւնքներն էլ մնան ըստ առաջնոյն առանց որ և է հետևանքի, որոշեց կազմել չորս հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն՝ յանձնարարելով նրան գնալ Ս. Էջմիածին և տալ ուր անկ է մանրամասն բացատրութիւններ ժողովի կազմած երկու—տնտեսական և իրաւական—վարչական—ծրագիրների մասին։ Պատգամաւորութեան անդամ ընտրուեցան պ. պ. Ղամբարեան Պօղոս, Յարութիւնեան Սամսօն, Զաւարեան Սիմէօն և Սահակեան Աւետիք։ Ժողովը փակուեց ցերեկուայ ժամը 3-ին։

Նախագահ ընդհանուր ժողովի
Անդամ Սինօդի Բարգէն վարդապետ

Անդամք՝ Յ. Ամիրխանեան Ս. Սահակեան
Ս. Արծրունի Ս. Խաչատրեան
Ա. Թադէոսեան Գ. Աղաբաբեան
Ս. Սահակեան Ս. Զաւարեան
Յ. Սպենդիարեան
Քարտուղար Մուշէ վարդապետ.

ՆԻՍՏ Ե.

1907 թիւ Հոկտեմբեր 25-ին կայացաւ վանական կալուածների բաբուքման մասին խորհրդակցելու համար կազմուած ժողովի հինգերորդ նիստը՝ նախագահութեամբ Տ. Բարգէն վարդապետի՝ ներկայ էին Տ. Մուշէ վարդապետ, Գ. Աղաբաբեան, Յ. Ամիրխանեան, Ս. Զաւարեան, Ն. Տիգրանեան, Ա. Սահակեան, Ս. Սահակեան, Յ. Սպենդիարեան և Ա. Թադէոսեան։ Կարդացուեց նախկին ժողովի արձանագրութիւնը։ Ժողովը ի նկատի առնելով որ ժողովականներից շատերը բացակայ են՝ որոշեց լսել պ. Յ. Սպենդիարեանի զեկուցումը և ներկայացնել հետևեալ ընդհանուր ժողովի հաստատութեան։

Պ. Յովհաննէս Սպենդիարեանը կարդաց իւր զեկուցումը։ Պ. Սմէօն Զաւարեանը յայտնեց այն կարծիքը, որ անհրա-

ժեշտ է սահմանել որոշ ազգային տուրք մեր բոլոր կուլտուրական հաստատութիւնների համար։ Այդ տուրքը պէտք է սահմանի կենտրոնական ժողովը և պարտադիր դարձնի բոլորի համար։ Այդ առաջարկութեան առարկեցին ժողովականներից շատերը, որ ի նկատի առնելով գոյութիւն ունեցող օրէնքները, կարծում են, թէ այդպիսի տուրք հաստատելը դժուար և անիրագործելի կելինի, բայց ընդհակառակը նպատակայարմար համարուեց ծխական տուրք մտցնել, որ թոյլ է տրուած ներկայ Տ. Փոխարքայի ժամանակաւոր կանոններով։

Տ. Մուշէ վարդապետը նկատում է, որ սխեմայի մէջ հայ հոգևորականութիւնը բոլորովին դուրս է ձգուած։ Նա ներկայացնում է մի իրաւազուրկ մարմին, այդ հանգամանքը կարող է բազմաթիւ թիւրիմացութիւնների և ընդհարումների պատճառ դառնալ, ուստի առաջարկում է այդ անհարթութիւնը մեղմելու համար որոշել, որ Թեմական Առաջնորդը ոչ միայն նախագահ է Թեմական ժողովի, այլ և Թեմական խորհրդի։ Բացի այդ Կենտրոնական ժողովը կազմուած պիտի լինի Թեմերի ներկայացուցիչներից, որոնցից իւրաքանչիւրը հնարաւորութիւն պիտի ունենայ Կենտրոնական ժողովում պաշտպանել իւր Թեմի կարիքները և, որ գլխաւորն է, բիւրջէն։ Ս. Էջմիածնի բիւրջէն պէտք է քննուի Կենտրոնական ժողովում, բայց Էջմիածինը հնարաւորութիւն չպիտի ունենայ պաշտպանելու իւր կարիքները, իւր բիւրջէն։ Անհրաժեշտ է, որէջմիածինն իւր յատուկ ներկայացուցիչն ունենայ Կենդրոնական ժողովում։ Բացի այդ պէտք է որոշել նաև Կենդրոնական ժողովի նախագահութեան խնդիրը՝ հետևողական լինելու համար պէտք է որ այդ նախագահն Ս. Էջմիածնիմիաբանութիւնից լինի՝ որին կընշանակէ Վեհափառ կաթուղիկոսը։

Ժողովը որոշեց ընդունել՝ ա.) Թեմական ժողովի և խորհրդի նախագահն է Թեմական Առաջնորդը։ բ.) Կենդրոնական ժողովին անդամակցում է Ս. Էջմիածնի միաբանութիւնից ընտրուած մի անձը. գ.) Կենդրոնական ժողովի նախագահ համարւում է Վեհափառ կաթուղիկոսը։

Ի վերջոյ հայր Մուշէ վարդապետը ժողովի ուշադրութիւնը հրաւիրեց Կովկասից դուրս գտնուած երկու Թեմերի վրայ, որոնց ներքին ազգային կեանքը գտնուում է բոլորովին

ուրոյն պայմանների մէջ, քան Կովկասում։ Այսպէս օրինակ, մինչդեռ Կովկասահայերը օգտուում են Տ. Փոխարքայի հրատարակած ժամանակաւոր կանոններով, Աստրախանի և Բեսարաբիայի թեմերը նոյն իսկ զրկուած են իրենց ծխական—եկեղեցական դպրոցներ ունենալու և կառավարելու իրաւունքից։

Ժամանակն ուշ լինելու պատճառով ժողովը որոշեց յատկապէս զբաղուել այդ ուշագրաւ խնդրով իւր յաջորդ նիստում։ Պ. Յովհաննէս Սպենդիարեանի կազմած ծրագիրը մի քանի փոփոխութիւններով ժողովականներն որոշեցին ներկայացնել հաւանեալ ընդհանուր ժողովի հաստատութեան։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
Անդամ Սինոդի՝ Բարգէն վարդապետ
Անդամք՝ Արշակ Թադէոսեան Սարգիս Սահակեան
Գրիգոր Ազաբաբեան Յովհաննէս Սպենդիարեան
Աւետիք Սահակեան
Քարտուղար՝ Յովսէփ Ամիրխանեան.

ՆԻՍՏ Զ.

1907 թ. 28 Հոկտեմբերի կայացաւ վերջին վեցերորդ նիստը նախագահութեամբ Տ. Բարգէն վարդապետի, ներկայ էին պ. պ. Ս. Արծրունի, Յ. Ամիրխանեան, Գ. Ազաբաբեան, Տ. Գեօզալեան, Ա. Թադէոսեան, Ա. Սահակեան, Ս. Սահակեան, Ս. Խաչատրեան և Յ. Սպենդիարեան։

Կարդացուեցաւ անցեալ ժողովի արձանագրութիւնը, որը մի քանի դիտողութիւններից յետոյ ժողովականների կողմից հաստատուեցաւ։ Յօդուածական կարգով կարդացուեցաւ վերջին խմբագրութեամբ Իրաւաբանական—Տնտեսական սեկցիայի կազմած ուրուագիծը, որն՝ ժողովը լսելուց յետոյ հաստատեց։

Նախագահ ընդհանուր ժողովի՝
Անդամ Սինոդի՝ Բարգէն վարդապետ
Անդամք՝ Սմբատ Խաչատրեան Տիգրան Գեօզալեան
Սենեքերիմ Արծրունի Աւետիք Սահակեան
Արշակ Թադէոսեան Սարգիս Սահակեան
Գրիգոր Ազաբաբեան Յովհն. Սպենդիարեան
Քարտուղար՝ Յովսէփ Ամիրխանեան.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ։

Տնտեսագիտական սեկցիան սկսեց իր պարապմունքները հոկտեմբերի 8-ին և վերջացրեց 18-ին։ Նա ունեցաւ վեց նիստ, հոկտեմբերի 8, 9, 10, 11, 15 և 18-ին։

Սեկցիան իր պարապմունքները կանոնաւոր վարելու համար ընտրեց իր առաջին նիստում պ. Ա. Բալանթարին նախագահ և որոշեց զբաղուել հետեւեալ խնդիրներով։

I Կազմել ծրագիր եկեղեցական կալուածների այնպիսի ուսումնասիրութեան, որ նիւթ մատակարարէ կալուածների բարւոքման ուրուագիծները մշակելու համար։

II Օգտուելով եկեղեցական կալուածների մի քանիսի կառավարիչների ներկայութիւնից, ծանօթանալ կալուածների ներկայ դրութեան ու մերձակայ կարիքների հետ և յայտնել խորհրդածութիւններ այն մասնաւոր բարւոքումների մասին, որոնք կարող են գործադրուել մինչև վերջնական տնտեսական ուրուագծերի մշակումը և իրագործումը։

III Քննել կալուածների բարեկարգութեան ուղեկից խնդիրները և պարզել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են կալուածների բարեկարգութեան ծրագիրը իրականացնելու համար։ Սեկցիան կարեւոր համարեց ստուարացնել իր կազմը, հրաւիրելով մասնագէտ և հմուտ անձեր։ Սեկցիայի պարապմունքներին մասնակցեցին հետեւեալ անձերը, հոգեորականներ՝ Բարգէն և Մուշէ վարդապետները, ագրոնոմներ և անտառագէտներ՝ Ա. Բալանթար, Ս. Զաւարեան, Ա. Թադէոսեան, Պ. Կանդուրալեան, Տ. Գեոզալեան, Կ. Մելիք-Բախտամեան, հանքագէտ՝ Գ. Աղաբաբեան, ֆինանսիստներ՝ Կ. Ալիխանեան, Պ. Ղամբարեան, հոդաբարձական ներկայացուցիչներ՝ Ա. Աթաբէկեան, Ա. Առաքելեան, ինժիներներ՝ Գ. Կիրակոսեան Յ. Զախմախսաղեան, Յովսէփեան, կալուածական կառավարիչներ Ս. Սահակեան, Տ. Մատինեան և Լ. Տէր Աւետիքեան։

Սեկցիան զբաղուեց յատկապէս այն խնդիրներով, որոնք ունեն տնտեսագիտական բնաւորութիւն, թողնելով միւս խնդիրների քննութիւնը խորհրդակցութեան ընդհանուր ժողովին Իրաւագիտական սեկցիայի հետ միասին։

Ներկայ զեկուցմանը կցուած են 1, կալուածների ուսումնասիրութեան ծրագիրը, որ մշակել է սեկցիան իւր նիստերում, 2, հանքագէտ Գ. Ազարաբեանի գրաւոր կարծիքը «էջմիածնապատկան հանքերի չահագործութեան մասին» և 3, Ս. Սահակեանի առաջարկութիւնները Մարցի կալուածի չահագործութեան մասին։

I.

Տնտեսագիտական սեկցիան, ծանօթանալով այն բոլոր նիւթերի հետ, որոնք գոյութիւն ունեն եկեղեցական կալուածների վերաբերմամբ, եկաւ այն եզրակացութեան՝ որ առաջինը կալուածների չահագործութիւնը գտնուում է ներկայումս վերին աստիճանի անբաւարար վիճակի մէջ և որ երկրորդ, կան բաւականաչափ հիմունքներ պնդելու թէ կալուածների բարեկարգութեամբ հնարաւոր է զգալի չափով աւելացնել նրանց արդիւնաբերութիւնը և մեծացնել նրանց տարեկան եկամուտը։

Կալուածների բարեկարգութեան նախագիծներ մշակելու կամ «անտեսութեան ուրուագծեր կազմելու համար սակայն անհրաժեշտ են մի չարք տեղեկութիւններ, թուեր, յատակագիծներ, մակարդակներ, փորձնական ցուցումներ։ Դրանցից ոչ մէկն էլ չկայ մեր տրամադրութեան տակ, որովհետև էջմիածինը երբէք լուրջ ու սիստեմական կերպով չէ զբաղուել կալուածական բարեկարգութեան խնդրով և չէ կազմակերպել նրանց մանրամասն ուսումնասիրութեան գործը։ Իսկ առանց տնտեսական, տեխնիկական և այլ նիւթերի անկարելի է որ և է էական քայլ անել դէպի առաջ բարեկարգութեան ծրագիրներ մշակելու ժամանակ։ Իրերի այդպիսի դրութիւնը ցոյց է տալիս, որ անհրաժեշտ է անմիջապէս ձեռնարկել այն բոլոր նիւթերի հաւաքման և նախապատրաստութեան, որոնց հիման վրայ կարելի է կազմել կալուածների բարեկարգութեան ուրուագիծները։

Նկատ առնելով այդ հանգամանքները սեկցիան զբաղուեց մշակելով կալուածների ուսումնասիրութեան մի ծրագիր, որը պէտք է տայ այն նիւթերը, որոնց բացակայութեան պատճառով անհնարին է ներկայումս առաջ տանել կալուածների բարեկարգութեան գործը։

Ուսումնասիրութիւնը պէտք է կատարուի յատուկ յանձնաժողովների ձեռքով, որոնք պէտք է կազմուած լինեն գիւղատնտես կամ հանքագէտ մասնագէտներից, իրաւագէտներից, կալուածների կառավարիչներից և տեղական ազգաբնակութեան ներկայացուցիչներից։ Մասնագէտների տեսակը և թիւը անշուշտ կախուած կլինեն որոշ կալուածի բնաւորութիւնից. այնտեղ, ուր անտառային մեծ տնտեսութիւն է, անկասկած մասնագէտը կըլինի անտառագէտը. այնտեղ, ուր վարելահողեր են և այգեստեղեր, հարկաւոր կլան ագրոնոմներ, այնտեղ, ուր հանքային հարստութիւններ կան, կը հրաւիրուեն հանքագէտներ, այնտեղ՝ ուր խճճուած իրաւաբանական յարաբերութիւնների խնդիրներ կան, անհրաժեշտ կը լինեն իրաւագէտներ և այլն։

Յամենայն դէպս՝ յանձնաժողովում աւելի երկարատև և մեծ գործ ու աշխատանք կունենան անտառագէտները և ագրոնոմները, իսկ հանքագէտները և իրաւագէտները կը հրաւիրուեն միայն որոշ ժամանակներում՝ որոշ խնդիրների ուսումնասիրութեան և քննութեան համար։

Տնտեսագիտական սեկցիան հաշուի առնելով այն հանգամանքը, որ մի անգամից դժուար է և թանգ կընտէ եկեղեցապատկան բոլոր կալուածների մանրամասն ուսումնասիրելը, այն որոշման եկաւ, որ պէտք է ուսումնասիրութիւնը կենտրոնացնել առ այժմ խոշոր կալուածների վրա և վերջիններից էլ գերազանցութեան տալ այնպիսիներին, որոնք դրանուումն երկաթուղիների կամ շուկաների մօտ և յարմարութիւն ունեն հեշտութեամբ վաճառահանելու կալուածների արդիւնաբերութեան նիւթերը։ Այդ կալուածներն են՝ նախ Մարցի կալուածը Բօրչալուի գաւառում, որին կարելի է կցել նաև Հաղբատի ու Սանահնի կալուածները նոյն Բօրչալուի գաւառում և Հաղարծինը Ղազախի գաւառում, երկրորդ Վաղարշապատի կալուածը Էջմիածնի գաւառում, երրորդ Գանձասարի կալուածը Զիվանչիրի գաւառում և չորրորդ Զարէքավանքի կալուածը Գանձակի գաւառում։ Այնուհետև գալիս են Խօթավանքը Զիվանչիրի գաւառում, Տաթևը Զանգեզուրի գաւառում, Ախալքալակի կալուածները, Կարմիր վանքը, Նախավկան. Տայլարը և ուրիշ մանր կալուածները։

Առաջին կարգի կալուածների ուսումնասիրութեան հա-

մար յանձնաժողով կազմելու մասին անհրաժեշտ է հոգալ այժմեանից իսկ, որպէսզի կարելի լինի անմիջապէս գործի ձեռնարկել։ Սեկցիան ենթադրում է, որ յանձնաժողովը իր առաջին տարուայ գործունէութեան հիման վրայ կարող կըլինի կազմել տնտեսական ուրուագիծներ և ընթացք տալ բարեկարգութեան գործին։ Այդ յանձնաժողովի անդամների վարձատրութեան և ուրիշ ծախքերի համար կը պահանջուի 3—5 հազար ռուբլի, որպիսի գումարը պէտք է էջմիածինը յատկացնէ յիշուած նպատակի համար առանց յետաձգելու, որովհետև ամեն մի յետաձգում այդ գործում հեռացնում է մեզնից կալուածների բարեկարգութեան սկզբնաւորութիւնը։

Ինչ վերաբերում է յետագայ տարիների ուսումնասիրութիւնների կազմակերպութեանը, սեկցիան այդ հարցի լուծումը որոշեց թողնել այն զեկավարող վարչութեան ու մարմնին, որ կը կազմուի Էջմիածնում կամ ապագայ համագումար ժողովներին։

Ստորև մի առանձին ցուցակում նշանակուած է յանձնաժողովների կազմը զանազան կալուածների վերաբերմամբ։ (տես Ա.)

Սեկցիան, մշակելով կալուածների ուսումնասիրութեան ծրագիր, նշանակել է այն գլխաւոր կէտերը, որոնց նա կարևոր համարեց ուսումնասիրութեան գործի լիակատարութեան համար։ Անկասկած՝ ուսումնասիրող յանձնաժողովները իրանք կաւելացնեն մի շարք նոր կէտեր, որոնք հանդէս կը գան տեղական պայմանների քննութեան ժամանակ։ Յանձնաժողովները, լինելով կազմուած հմուտ անձերից, շատ հեշտութեամբ կըմբռնեն այն շարժառիթները, որոնց շնորհիւ մուծվել են ծրագրի մէջ այս ու այն կէտը, ուստի և կարևորութիւն չէ զգացուում յատուկ բացատրական մեկնաբանութեան նրանց նշանակելու առիթով։

II.

Վերջացնելով ծրագրի մշակումը Տնտեսագիտական Սեկցիան անցաւ իր պարապմունքների երկրորդ կէտին՝ այն է՝ տալ մի քանի ցուցումներ կալուածների կառավարութեան և նրանց մասնաւոր բարեկարգութեան մասին, մինչև որ կը

մշակուի և գործադրութեան կը յանձնուի տնտեսական ուրուագծերի վերջնական ձևակերպութիւնը և խմբագրութիւնը։

Մարցի և Հաղարձին կալուածների վերաբերմամբ լսեց կառավարիչ Ս. Սահակեանի զեկուցումը, որը կցուում է ներկայ արձանագրութեան։ Սեկցիան մանրամասն քննելով զեկուցումը, ուշադրութեան առնելով Մարցի կալուածքի հետ ծանօթ անձերի միւս տեղեկութիւնները, եկաւ այն եզրակացութեան, որ ներկայումս անկարելի է կազմել շահագործութեան մանրամասն ուրուագիծ, բայց հաստատապէս կարելի է յանձնարարել, որ 1) կատարուեն հարթաչափութեան (нивеллировка) աշխատանքներ՝ նաև ոռոգանալ (желоба) նպատակով։

2. Սկսուեն բանակցութիւններ հարևան կալուածատէրերի, այլ և արքունական հողերի վարչութեան հետ շահագործութիւնը կազմակերպելու համար։

3. Աջողեցնել առանձին երկաթուղիական կայան (разъѣздъ) բանալու Մարցի փայտի արտահանութեան համար։

4. Փորձ անել անտառից վառելափայտը ջրալող հասցնելու մինչև ներքին մասերը։

5. Յանձնել մէկին ծանօթանալ անտառի ջրով փոխադրելու գոյքի հետ Քութայիսի նահանգում։

6. Հոգ տանել շահագործութեան պահանջելի 10–20,000 բուբլու հայթայթման համար։

Ունենալով բոլոր նիւթերը և պարզած լինելով շահագործութեան հանգամանքները, պէտք է անմիջապէս դիմել Մարցի անտառի շահագործութեան, աչքի առաջ ունենալով առ այժմ վառելափայտի արտահանութիւնը։

Զարեֆավանքի վերաբերմամբ Սեկցիան խորհուրդ յայտնեց շարունակել առ այժմ եղած տնտեսութիւնը, մինչև յատուկ յանձնաժողովի ուսումնասիրութիւնները և աշխատել կալուածքի ազատ տեղերում հող տալ սակաւահող գիւղացիներին։

Խօրավանքի վերաբերմամբ Սեկցիան խորհուրդ յայտնեց

1) Փորձեր անել ջրաառատ ժամանակներում թառթառով իջեցնելու վառելափայտ և գերաններ, յատկացնելով դրա համար մի քանի հարիւր ռուբլի։

2. Հաւաքել գիւղացիներին կալուածքի մի կողմում, կարդալով «Ուստաների գրամօտաներ»։

3. Սակաւահող հայ գիւղացիներին հաստատել կալուածքի աղատ տեղերում։

4. Ցանձնարարել կառավարիչներին՝ մինչև յատուկ մանաժողովի ուսումնասիրութիւններ կատարելը ժողովել տեղեկութիւններ անտառների քանակի ու որակի մասին և պարզել գիւղացիների ցուցումներով հանքատեղեր։

Վաղարշապատ. Ջրի հարցը առաջ տանել. եղած փորձերի քննութիւնը. սխալներից խուսափելու համար հին ջրուղիների և ջրամբարների ուսումնասիրութիւնը,—Սեկցիան, լսելով ինժիներ Գ. Կիրակոսեանի բանաւոր զեկուցումը Էջմիածնի հողերի ջրելու (ոռոգելու) խնդրի և իր արած փորձերի ու դիտողութիւնների մասին, այլ և այն, որ նա դեռ չէ վերջացրել իր աշխատանքը և յոյս ունի մինչև ամառ ջուր դուրս բերել 500 դեսեատին ոռոգելու համար, նաև միւս մանագէտների խորհրդածութիւնները, եկաւ այն եզրակացութեան, որ Վաղարշապատի ընդարձակ հողերը ոռոգելու համար բաւականաչափ ջուր կայ թէ հողի սահմաններում և թէ չրջագայքում։ Այդ ջուրը կարելի է վերցնել թէ ստորերկրեայ ջրի պահեստներից և հոսանքներից, թէ Սև ջուր գետակից, թէ Քասախից և թէ Զանգուից։ Ներկայումս դեռ չէ կարելի ճիշտ կերպով ասել թէ ոռոգման որ ձևը գերադասելի է ֆինանսական և տեխնիքական տեսակէտներով և կարևոր են նորագոյն ուսումնասիրութիւններ յատուկ յանձնաժողովի ձեռքով, որը ուշադրութեան կառնէ թէ եղած վերջին փորձերը, թէ հին ջրանցքների և ջրամբարների աւերակները, թէ գարնան ջրերը, թէ ջրի հոսանքի ոյժի կէտերը և թէ ջրի հետ կապուած իրաւաբանական խնդիրները։

Ցանձնաժողովի կազմը զանազան կալուածների ուսումնասիրութեան վերաբերմամբ։

I Մարցի և Հաղարծնի կալուածքի ուսումնասիրութեան համար կազմուելիք յանձնաժողովը պէտք է բաղկացած լինի հետևեալ անդամներից.

I. անտառագէտ, 2. հանքագէտ, 3. իրաւագէտ, 4. կառավարիչ, 5. ներկայացուցիչ.

II Էջմիածին. 1. ինժիներ գեղրավլիկ. 2. ագրոնոմ. 3. իրաւագէտ 4 » 5 »

III Գանձասար 1. անտառագէտ, 2. հանքագէտ, 3. իրաւագէտ 4 » 5 »

IV Զարեգավանք. 1. անտառագէտ. 2. հանքագէտ. 3. ագրոնոմ 4 » 5 »

V Ախալքալաք 1. ագրոնոմ. 2. իրաւագէտ . . .

VI Կարմիր վանք 1. Ագրոնոմ.

VII Խոթավանք 1. անտառագէտ. 2. հանքագէտ. 3. իրաւագէտ 4 » 5 »

VIII Տաթև 1. Ագրոնոմ 2. հանքագէտ 3. իրաւագէտ.

Փոքր կալուածներ—կառավարիչը և ներքաւոր մասնագէտը։

Տնտեսագիտական Սեկցիան, քննելով կալուածների բարեկարգութեան համար անհրաժեշտ գումարների հայթհայթման, այլ և տուրքերի կանոնաւորութեան, յարաբերութիւնների բարւոքման և ուրիշ ինդիրներ, կայայրեց մի քանի որոշումներ, որոնք են՝

I Կալուածքների չահագործութեան համար անհրաժեշտ դրամագլուխները ձեռք բերելու խնդրի վերաբերմամբ անտեսագիտական սեկցիան, քննելով խոշոր և մանր ձեռնարկութիւնների իրագործման հարցերը, եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է դիմել կողմնակի դրամագլուխների այն բոլոր դէպքերում, երբ Էջմիածինը ինքը անկարող կըլինի կազմակերպել չահագործութիւնը իր սեփական միջոցներով։

Ենթադրելով, որ փոքր ձեռնարկութիւնների համար կարող են գտնուել գումարներ և Էջմիածնի դրամարկղում, Սեկցիան բարւոք է համարում միջակ ձեռնարկութիւնների համար ընդունել տեղական ընկերակցութիւնների գործակցութիւնը կամ կապալները, իսկ աւելի խոշոր ձեռնարկութիւնների համար նաև օտար կապիտալների աջակցութիւնը կամ կոնցեսիաները։

II Ցանկանալով տալ գիւղական համայնքներին հնարաւորութիւն օգտուելու ձեռնտու պայմաններով վանքապատկան հողերից, Տնտեսագիտական Սեկցիան նպատակայարմար է համարում հողերը տալ գիւղերին անմիջապէս, առանց միջնորդների։

III Սեկցիան նոյնպէս բարւոք է համարում որտեղ հնարաւոր է մասնատուրքը վերածել փողատուրքի, որով գիւղացին կազատուի համայնականութիւնից, պատահականութեան ծանրութիւնից և տուրքի վերաւորական ձևից, միևնոյն ժամանակ վանքական կառավարութիւնն էլ կը ստանայ որոշակի գումարներ և կը լինի մշտապէս որոշ յարաբերութիւնների մէջ, ազատ լինելով թիւրիմացութիւններից։

IV Սեկցիան կարևոր է համարում կազմել եկեղեցապատկան հողերի ընդհանուր ցուցակ և նշանակել իւրաքանչիւր կալուածքի շրջանում եղած գոյքը, սիստեմի տակ դնելով եկեղեցապատկան կալուածքների վերաբերմամբ եղած բոլոր վաւերաթղթերի և գործերի պահպանութիւնը։

V Սեկցիան նպատակայարմար ճանաչեց կալուածների ազատ հողերի վրայ, ուր յարմարութիւններ կան, ժողովել սակաւահող հայ գիւղացիներ և կազմել գիւղեր։

Սեկցիան իւր պարապմունքների ընթացքում, սկսած առաջին նիստից մինչև վերջինը, բազմաթիւ խնդիրներ քննելու ժամանակ գալիս էր այն եզրակացութեան, որ կալուածների բարեկարգութեան վերաբերութեամբ յայտնուած բոլոր բարի ցանկութիւնները կը մնան թղթի վրայ, եթէ չի լինիլ մի մարմին, մի հաստատութիւն, որը իրագործողի, ղեկավարողի և հսկողի պաշտօն վերցնի իր վրայ։ Այդպէս օրինակ երբ հարց ծագեց դրամական միջոցներ գտնելու մասին ծրագրուող բարեկարգութիւնները իրագործելու համար, Սեկցիայում մասնակցող Ֆինանսական գործին ծանօթ անձերը ասում էին, որ եթէ էջմիածինը չունենայ ինքը դրամական միջոցներ, հնարաւոր կը լինի փող գտնել դանազան աղբիւրներից, բայց փող տուողները կամ որոշ պայմաններով ձեռնարկութիւն սկսողները կը ցանկանան գործ ունենալ հեղինակաւոր և բոլորովին վստահելի հաստատութեան հետ, իսկ էջմիածինը իր ներկայ վիճակով դեռ չէ տալիս այդ

վատահութիւնը։ Երբ քննուում էր Էջմիածնին առաջարկուած ձեռնարկութիւնների նպատակայարմարութեան խնդիրները, պարզուում էր, որ Էջմիածինը չունի մի մարմին, որ կարողանար հեղինակաւոր կարծիք տալ ձեռնարկութեան մասին. (օրինակ ջրաչխութեան խնդրի) կամ հոգար մասնագէտների և յատուկ յանձնաժողովների միջոցով ձեռք բերել հեղինակաւոր եզրակացութիւն։

Այդ և դրանց նման ուրիշ նկատումները աչքի առաջ ունենալով Տնտեսագիտական Սեկցիան այն կտրական կարծիքն է յայտնում, որ մինչև չիրագործուի կալուածների կառավարութեան վարչական կազմակերպութիւնը, բարեկարգութեան նպատակով արած փորձերը մատնուած կլինեն անաջողութեան, ուստի Սեկցիան չէ կարող երաշխաւորել բարեկարգութեան ծրագիրների կենսունակութիւնը և արդիւնաւէտութիւնը մինչև իրագործութիւն ստացած չի լինիլ վարչական կազմակերպութիւնը։

Սեկցիայի նախագահ՝

Ա. Քալանթար

Անդամք՝ Ս. Զաւարեանց — Ս. Սահակեանց
Գրիգոր Աղաբաբեանց — Ա. Աթաբէկեան
Պ. Կանդուրալեան — Մուշէ վարդապետ
Տ. Գեօղալեան — Ա. Թադէոսեան։
Յ. Մելիք-Բախտամեան

ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ։

1. Հողը, տարածութիւնը, տոպոգրաֆիան, հողի տեսակները, նրանց յատկութիւնը. կլիմայական պայմանները. արդիւնաւորութիւնը, մշակուող բոյսերը, չահագործութեան պայմանները, հողի վաճառագինը, կապալագինը։

2. Ջուրը, ա. Ոռոգման ջրի տեսակները, գետեր, առուներ, ջրամբարներ, քեահրիզներ։

բ. Ջրի պաշարը։

գ. Ոռոգում բնական ընթացքով և արհեստական միջոցներով։

դ. Ջրի կարիքի չափը։

ե. Ջրի պակասութիւնը լրացնելու միջոցներ (ջրի կարիքի չափի համաձայն) նոր քեահրիզներ. մանր հորերով ջուր հանելը, գարնան ջրերով ապահովել ամառուայ կարիքը. ինչ ծախք կարող է լինել ջուր դուրս բերելու համար։

Ջրազուրկ և ջրարբի հողի կապալագինը (1, 2, 3—4 անգամ ջրուող) » » » » համեմատական արդիւնաբերութիւնը, ջուր դուրս բերելը գիւղացիների հետ միասին, Մելիորատիվ կրեդիտի դերը. ջրի մեքենայական ոյժի մեծութիւնը և արժէքը. ջրի նշանակութիւնը իբրև փոխադրութեան միջոց. (փայտի և ուրիշ իրերի համար)

3. Անտառ. Անտառի դրութիւնը, խտութիւնը, անտառի յատակագիծը, ծառերի տեսակները, աճման աստիճանը, տնտեսութեան սիստեմը, շրջանադարձ շահագործութիւնը (Система , Оборотъ рубки) շահագործութեան եղանակները, գերան, տախտակ, չպալ, կլէօպկա, վառելափայտ և ուրիշ մթերք պատրաստելու համար։

Վաճառահանութեան տեղերը և եղանակները՝ քաղաք, կայարան, գործարան, փոխադրութեան միջոցները՝ ա. սայլով, բ. ջրալող сплавъ, գ. նաւերով։ Շահագործութեան պայմանները, փոխադրութեան արժէքը, գները։ Անտառի որ մասը կարելի է վարելահող կամ այգեհող դարձնել։

4. Արօտներ և խոտահարք.

Նրանց դիրքը և տարածութիւնը,

Որակութիւնը,

Ո՞ր տեղերը կարելի է վարելահող և այգետեղ դարձնել, գիւղացիների մշտական բռնած տեղերը, Սերվիտուտների որոշումը, կապալագինը կամ տարեկան տուրքերը, ինչպէս կարելի է բարելաւել շահագործութիւնը։

5. Հանքեր. հանքերի տեղերի ճիշտ նշանակումը, հին հանքերի տեղերը, հանքերի տեսակները, նկարագրութիւն հանքատեղի, հին մշակութեան մասին նիւթեր, որտեղ պէտք է կատարել լիակատար ուսումնասիրութիւն.

Շահագործութեան տեղական հանգամանքները ու պայմանները, վաճառահանութեան պայմանները, շահագործութեան ծրագիրներ.

6. Ցարաբերութեան խնդիրներ.

ա. Գիւղացիների վերաբերութեամբ, ներկայ դրութիւնը.

մանատուրքի վերածումը փողատուրքի, պարտաւորեալ յարաբերութիւնների վերացման համար նիւթեր.

բ. Ուրիշ կալուածների և կառավարութեան վերաբերութեամբ հողային հարկ, նրա համապատասխանութեան աստիճանը։

7. Վաւերաթղթեր. յուցակ կալուածների թէ խոշոր և թէ մանր. յատակագիծներ—դոկումենտներ հողի, ջրի, ջրաղացների և այլն պատճէններ։

8. Հաղորդակցութիւն.

Ցամաքով՝ երկաթուղի (նոր կայարաններ չինելու անհրաժեշտութիւնը). խճուղի, ճանապարհներ գիւղամէջ և դէպի լեռները, կամուրջներ, (եղածները և հարկաւորները) ջրով՝ մեծ գետեր եղած տեղերում, սալ (պարօմ), նաւակ, ինչ կը նատէ հաղորդակցութեան ճանապարհների բարւոքումը, որքան կարելի է գործել տեղական ազգաբնակութեան հետ միասին։

9. Գիւղ գձելը կալուածների ազատ տեղերում.

Որոշել հողերի տարածութիւնը և սահմանները, աչքի առաջ ունենալ այդպիսի տեղեր Վաղարշապատի, Զարեքավանքի, Խոթավանքի, Հաղարծինի, Կարմիր վանքի, Նախավկայի, Տայլարի և ուրիշ տեղերում։

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆ։

Վարչական—Իրաւական սեկցիայի ժողովները կայացել են Սինոդի անդամ Տ. Բաբգէն վարդապետ Աղաւելեանի նախագահութեամբ, քարտուղարի պաշտօնը կատարել է իրաւագէտ պ. Սիրական Տիգրանեանը, իսկ ժողովներին մասնակցել են իրաւագէտներ՝ պ. պ. Ղամբարեան Պօղոս, Յարութիւնեան Սամսօն, Տիգրանեան Նազարէթ, Սպենդիարեան Յովհաննէս, Արծրունի Սենեքերիմ, Ամիրխանեան Յովսէփ, Խաչատրեան Սմբատ, Դօլուխանեան Մարկոս, Սահակեան Աւետիք, Քալանթարեան Նիկողայոս, Յովհաննիսեան Տիգրան, Կուսիկեան Աբշակ։ Սեկցիան մի շարք խորհրդակցութիւններից յետոյ ամփոփեց իւր ասելիքները հետեւեալ զեկուցման մէջ։

Վանքապատկան գոյքերի շահագործման աննախանձելի պակասութիւնների հիմնական պատճառը նրանց կառավարման անպատակայարմար և անկարգ ու անկանոն եղանակն է, որն իւր ներկայ անկեղծարան վիճակից անհրաժեշտ է վերածել ըստ ամենայնի պատշաճաւոր և վստահելի մի այլ ձևի։

Կառավարման այս լաւագոյն ձևն օրոշելու ձեռնամուխ լինելիս՝ Սեկցիան գործնական շարժառիթներից դրդուած, ժառդրուեց ոչ թէ ցանկալի նորմաների մի բոլորովին նոր նախագիծ յօրինել իւր կողմից, այլ, տիրող կանոնական ու օրինական հողի վրայ կանգնած մնալով, պարզել, մեկնաբանել և արձանագրել այն դրական կարգերը (թէ եկեղեցական և թէ պետական ծագում ունեցող), որոնք՝ իբրև de jure պարտադիր զօրութիւն վայելող եղանակներ՝ անյապաղ պէտք է գործադրութեան առնուին նաև de facto իրականանալու մեր եկեղեցու կառավարութեան համապատասխան շրջաններում։ Մշակելիք դրական կարգերը պէտք է գործադրուեն թէ վանքապատկան և թէ եկեղեցապատկան կայքերի վերաբերմամբ։

Գալով այդ դրական կարգերի որպիսութիւնն որոշելուն, Մասնաժողովը նախ հաստատեց, որ վանքապատկան կայքերը մեր եկեղեցու տնտեսութեան թեմական չրջանին պատկանելով ըստ տնօրէն իրաւատիրոջ (ինչպէս որ առանձին եկեղեցիներին պատկանող կայքերն եկեղեցու տնտեսութեան ծխական չրջանին են վերաբերում, ծխական ժողովը իբրև իրաւատէր տնօրէն ունենալով), իւրաքանչիւր թեմում գտնուող բոլոր վանքապատկան կայքերի գլխաւոր կառավարիչն ու կարգադրիչը հանդիսանում է՝ թէ՛ մեր եկեղեցու կանոնական կարգի եւ թէ ռուսաց պետական օրենսդրութեան համաձայն՝ թեմական պատգամաւորական ժողովը։ Իսկ եկեղեցական կայքերի վերաբերմամբ թեմական ժողովը պէտք է լինի վերահսկող և քննող նրանց կառավարութեան, չահագործման գործը, ինչպէս և ել ու մուտքը։

Պետութեան օրէնքի կողմից այս թեմական ժողովի իրաւական գոյութիւնը ճանաչուած է եղել դեռ 1836 թուի պոլժենիայով (յոդ. 1120) կաթուղիկոսական ընտրութեան համար թեմի կողմից պատգամաւոր ընտրելու առիթով։ Նոյն առիթով թեմական ժողովը աւելի մանրամասն կարգադրուած էր նախկին Փոխարքայի 1865 թ. կանոններում։ Վերջապէս աւելի լիակատար ձևով նոյն թեմական ժողովի դումարման եղանակն ու կազմը որոշուած են ներկայ Փոխարքայի ժամանակաւոր կանոններում (տես Բ. մասն) արդէն թեմական դպրոցների կայքերի կառավարման առիթով (յայտնի է, որ թեմական դպրոցների տնտեսութիւնը կապուած է մեր եկեղեցու տնտեսութեան հետ)։

Թեմական Առաջնորդը մասնակցում է վանքապատկան կայքերի կառավարմանը նոյն թեմական ժողովում, իբրև այդ պատգամաւորական կոլեգիումի նախագահ (տես ժամանակաւոր կանոններ Բ. մասն յոդ. 2)։

Թեմական ժողովը կազմում է իւր թեմի թեմական եկեղեցական նախահաչիւը, որի մէջ մտնում են նաև թեմում գտնուող վանքապատկան բոլոր գոյքերը, սահմանուում է այն եղանակները ու օրգանները, որոնք վանքապատկան կայքերի անմիջական և ընթացիկ վարիչներն են լինելու և գործելու են պատասխանատուութեամբ և հաչուետուութեամբ նոյն թեմական ժողովի առաջ։

Թեմական ժողովները, իւրաքանչիւրը իւր թեմի համար, ըստ կայքերի և տեղական պայմանների ուրոյնութեան մշակում են նպատակայարմար հրահանգներ թեմական ամբողջ տնտեսութեան, նմանապէս և վանքապատկան կայքերի կառավարման համար։ Առանձին վանքապատկան կայքերի անվիջական կառավարութիւնը կարող է յանձնուել տեղական գործակալական կամ Ցաջորդական վիճակային ժողովներին՝ գործակալ քահանայի կամ Ցաջորդի նախագահութեամբ, ըստ որոշման թեմական ժողովի։

Թեմական ժողովը ընտրում է մի մշտական թեմական խորհուրդ . . . հոգուց չորս տարով ընթացիկ հսկողութեան, կարգադրութիւնների համար համաձայն թեմական ժողովի որոշումներին և հրահանգներին։

Թեմական ժողովի պատգամաւորական կազմի լիազորութեան ժամանակամիջոցը չորս տարի է, որի լրանալու դէպքում Թեմական Առաջնորդը վաղօրօք պատշաճաւոր կարգադրութիւններ է անում նոր պատգամաւորական ընտրութիւնների մասին (տես ժամանակ. կանոններ Բ. մասն, յօդ. 2)։

Իւր լիազորութեան քառամեայ ժամանակաշրջանում թեմական ժողովը գումարուելու է առ նուազն տարին մէկ անգամ հաշուետուութիւն ընդունելու և կարգադրութիւններ անելու (տես պօլօժենիա յօդ. 1211)։ Պատգամաւորներին թեմական ժողովի կարող են հրաւիրել Վեհափառ կաթուղիկոսը, Էջմիածնի Սինօդը, նոյն թեմի Առաջնորդը, թեմական վերատեսուչը յանձնաժողովը, (տես ժամանակ. կանոններ Բ. մասն, յօդ. 5)։

Թեմական ժողովներից բարձր է Կեդրոնական ժողովը, Ռուսահայոց բոլոր թեմերի ներկայացուցիչներից կազմուած։ Կենդրոնական ժողովը իրաւունք ունի քննելու և հաստատելու թեմական ժողովների կազմած նախահաշիւները և հաշիւները, փոփոխել այն, հետեւելով հաւասարութեան սկզբունքին. որպէս զի վանքապատկան կայքերը, որոնք ազգային-եկեղեցական ընդհանուր սեփականութիւն են, զանազան թեմերի միջև անհաւասար չափով բաժանուած լինելով, թե-

մերից մէկը անարդարապէս պակաս, միւսն անհաւասարապէս աւելի օգտուելիս չլինի դրանցից։

Մի քանի թեմերում արդէն անցեալ տարի պատգամաւորների ընտրութիւնը կատարուած և թեմական ժողովները կազմուած և մէկ անգամ գումարուած լինելով Փոխարքայից հաստատուած կանոնների համաձայն, այժմ պէտք է անյապաղ կարգադրութիւն անել բոլոր թեմերում թեմական ժողովներ գումարելու մասին, և ապա ձեռնարկել նաև կենդրոնական ժողով հրաւիրելու։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ

Սեկցիան հաստատեց նախորդ նիստի եզրակացութիւնները և արձանագրութիւնը։

Պ. Յովհաննէս Սպենդիարեանը առաջարկեց էջմիածնապատկան կայքերի կառավարման համար մի առանձին բացառիկ եղանակ ու վարչութիւն սահմանել, որպէսզի մինչև միւս բոլոր վանքերի կայքերը կառավարելու են թեմական ժողովների տնօրէնութեամբ, էջմիածնի կայքերը (գոնէ վանքին կից դանուողները) յանձնուեն մի յատուկ հաստատութեան։ Իւր առաջարկը պ. Սպենդիարեանը ձևաբանեց այսպէս՝ «էջմիածնում հիմնել մի առանձնայատուկ վարչական—տնտեսական խորհուրդ, տեղական ժողովրդի ընտրութեամբ, նախագահութեամբ էջմիածնի միաբանութեան ներկայացուցչի և իրաւասութեամբ թեմական խորհրդի, այդ խորհուրդը ենթարկուելու է կենտրոնական ժողովի իրաւասութեան։» Այս բանաձևը քուէարկութեան դրուելով՝ մերժուեց։ Այնուհետև մասնաժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեց առհասարակ որևէ բացառութիւն սահմանելու կարևորութիւնը, հաստատելով որ էջմիածնապատկան կայքերը, միւս բոլոր վանքերին պատկանող կայքերի նման միևնոյն ընդհանուր եղանակով պիտի կառավարուեն, այսինքն համապատասխան թեմերի թեմական ժողովներով, որոնց նախահաշիւները և գործունէութիւնը ենթարկուելու են կենտրոնական ժողովի վերահսկողութեանը։

Վերջացնելով կայքերի կառավարման, չահագործման

խնդիրը, Մասնաժողովը դիմեց ելևտականին, ստացուելիք եկամուտների և գումարների տնօրինման խնդրին։

Աչքի առաջ ունենալով, որ էջմիածինը տիրող եկեղեցական—վարչական բաժանման տեսակէտից թեմերից առանձին մի միութիւն է հանդիսանում (թեմի մէջ չէ մտնում) և ժանանդ ունի կարևոր հաստատութիւններ և բարդ բիւջէ, առաջարկութիւն եղաւ, որ էջմիածնի ներքին տնտեսութեան համար առանձին «էջմիածնի խորհուրդ» կազմուի, ճեմարանի, միաբանութեան և վանական այլ ինքնուրոյն հաստատութիւնների ներկայացուցիչներից բաղկացած, որն և ենթարկուի անմիջապէս Կենդրոնական ժողովին։ էջմիածնի խորհուրդը կը կազմէ և կիրագործէ էջմիածնի նախահաշիւը Կենտրոնական ժողովի հաստատմամբ և վերահսկողութեամբ։

Կարծիքներ յայտնուեցին, որ եթէ միւս վանքերին պատկանող կայքերի եկամուտները ստանալով թեմական ժողովները կարող են անարգել տնօրինել այն իրենց թեմի պէտքերի համար, ապա էջմիածնապատկան կայքերի եկամուտների նկատմամբ պէտք է որոշ սահմանափակում դնել, որպէսզի էջմիածինն իւր վարչական և կուլտուրական հաստատութիւններով նիւթական ապահովութիւնից չզրկուի։ Ի հարկէ, Մասնաժողովի վերևում ծրագրուած միջոցները՝ բարձրացնելով էջմիածնի կայքերի շահագործման եղանակները՝ անշուշտ արդիւնաւորելու են դրանցից մինչև այսօր ստացուող եկամուտների քանակութիւնը. հետևապէս, նիւթականի կողմից ընդհանրապէս արգելք չէ լինելու էջմիածնի ցայսօր վայելած ապահովութիւնը խախտելու կամ պակաս չափով պահպանելու նաև ապագայում։ Սակայն և այնպէս ցանկութիւն յայտնուեց, որ այդ ապահովութեան խնդիրը իւր բաւարար լուծումն ու դրականն ունենայ նաև բիւջետային կարգերում։ Այս առիթով առաջարկեցին, որ թէ էջմիածնի խորհրդի կազմելիք էջմիածնի նախահաշիւը, (ուր որոշուեն էջմիածնի նիւթական պէտքերը) և թէ թեմական ժողովների կազմելիք թեմական նախահաշիւները (ուր ի միջի այլոց նշանակուելու են էջմիածնապատկան կայքերի ելքն ու մուտքը) առաջարկուեն ի հաստատութիւն Կենդրոնական ժողովին, որն և աչքի առաջ կունենայ անշուշտ թէ էջմիածնի հաստատութիւնների իսկական պէտքերի չափը և թէ էջմիածնապատկան կայքերից

ստացուելիք եկամուտների արդար քանակը, ու ըստ այնմ էլ կը քննէ ու կը հաստատէ իրեն առաջարկուած նախահաշիւները։

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ.

Կարդացուեց և հաստատուեց նախորդ նիստի արձանագրութիւնը։

Մասնաժողովը կրկին անգամ քննութեան առնելով նախորդ նիստերում տեղի ունեցած խորհրդակցութիւնների եզրակացութիւնները, և համաձայնութեան գալով, որոշեց ձեւակերպել այդ կոնկրէտ յօդուածներով, սակայն միայն հիմնական կազմակերպչական կանոնները, թողնելով մանրամասն հրահանգների և անհրաժեշտ կանոնադրութիւնների յօրինումը առաջիկայ Թեմական և Կենդրոնական ժողովներին, որոնց ուշադրութեան առաջարկելու համար Մասնաժողովը ինքն էլ պատրաստելու է իւր կողմից այդ հրահանգների և կանոնադրութիւնների նախագծերը։

Իսկ ներկայումս Մասնաժողովը անհրաժեշտ է համարում ներկայացնել Ս. Էջմիածնի Սինօդին՝ Նորին Վեհափառութեան հաւանութեան և պատշաճաւոր կարգադրութեան մատուցանելու՝ Թեմական ժողովներ հրաւիրելու առաջարկը յետագայ հիմունքներով, որոնք չարադրուած են ի հետեւումն և ի զարգացումն «Պոլօժենիայի» մի քանի յօդուածների և ներկայ Փոխարքայի ժամանակաւոր կանոնների։

Եկեղեցական եւ վանքապատկան կալուածների կառավարութեան եւ շահագործման համար սահմանւում են հետեւեալ մարմինները։

Ա. Ծխական ժողովը 1) կառավարում է և շահագործում ծխական եկեղեցուն պատկանող կալուածները և սահմանում է ծխական տուրք։

2) Իրագործում է իր շրջանում բոլոր կուլտուրական կրթական գործերը։

3) Ընտրում է իրրև գործակիր մարմին ծխական խորհուրդ մի տարի ժամանակամիջոցով, որը շարունակում է կատարել իւր պարտականութիւնները մինչև նորի ընտրութիւնը։

4) Ինում է ծխական խորհրդի միջոցով կազմած տարեկան եկեմտից բիւջեն։

Ծխական ժողովը գումարուում է իւրաքանչիւր տարի ոչ պակաս քան մէկ անգամ. բացառիկ դէպքերում կարող է գումարուել և արտակարգ ժողով։

Ծխական ժողովի տարեկան տեղեկագիրը ներկայացուում է թեմական պատգամաւորական ժողովին, որին վերապահուում է հսկողութեան իրաւունքը ծխի գործունէութեան վերաբերեալ։

Բ. Իւրաքանչիւր թեմում գտնուող բոլոր վանքապատկան կայքերի գլխաւոր կառավարիչն ու կարգադրիչը թեմական պատգամաւորական ժողովն է՝ իրրև ընդհանուր տնօրէն թեմական ամբողջ կառավարութեան։

Գ. Թեմական ժողովի պատգամաւորական կազմը ընտրուում է չորս տարի ժամանակով յետագայ եղանակով. (տես ժամանակ. կանոններ Բ. մասն յօդ. 2)։

Դ. Թեմական ժողովի կազմի լիազօրութեան քառամեայ ժամանակաշրջանը լրանալուց առաջ թեմական խորհուրդը Առաջնորդի գիտութեամբ վաղօրօք պատշաճաւոր կարգադրութիւններ է անում նոր պատգամաւորական ընտրութիւնների մասին։

Հին պատգամաւորների լիազօրութիւնը շարունակուում է մինչև նորերի ընտրութիւնը։

Ե. Թեմական ժողովն տարեկան ունենալու է առնուազն մէկ նստաշրջան թեմական ժողովից որոշուած ժամանակին։ Արտակարգ նստաշրջանի թեմական ժողովը կարող է հրաւիրուել Վեհափառ կաթուղիկոսից, Էջմիածնի Սինոդից, թեմական խորհրդից և պատգամաւորների առնուազն 1/5-ից։

Զ. Թեմական Առաջնորդը մասնակցում է վանքապատկան կայքերի կառավարմանը թեմական ժողովում՝ իրրև այդ պատգամաւորական կոլեգիումի նախագահ։

Է. Թեմական ժողովներն իւրաքանչիւրն իւր թեմի համար ըստ կայքերի և տեղական պայմանների ուրոյնութեան

հրահանգներ և կանոնադրութիւններ են սահմանում Թեմական ամբողջ տնտեսութեան, նմանապէս և վանքապատկան կալուածների կառավարութեան համար։

Թեմական ժողովի իրաւասութեան ենթակայ են տեղական մանր ժողովները կամ գործակալութիւնները, որոնց անմիջական կառավարութեան և չահագործման են յանձնուում յիշեալ կալուածները համաձայն այդ ժողովում ընդունուած ծրագիրների և հրահանգների՝ այդ ժողովների թիւն իւրաքանչիւր թեմում և գործունէութեան չրջանն որոչում է Թեմական պատգամաւորական ժողովը։

Ը։ Թեմի բոլոր վարչական հաստատութիւններն ու պաչտօնեաները պարտաւոր են հաչուետուութեամբ ու պատասխանատուութեամբ Թեմական ժողովի առաջ։

1) Իւրաքանչիւր Թեմի չրջանում գտնուած բոլոր կուլտուրական կրթական և այլ հաստատութիւնները ենթարկուում են Թեմական պատգամաւորական ժողովի հսկողութեան։

2) Թեմական պատգամաւորական ժողովը պարտաւոր է հոգալ իւր Թեմում գտնուած աւերակ եկեղեցիների և վանքերի պահպանութեան մասին։

Թ. Թեմական ժողովը ամեն տարի կազմում է իւր Թեմի Թեմական Լիւսմի նախահաչիւը, որի մէջ են մտնում նաև Թեմում գտնուող բոլոր վանքապատկան կալուածների եկամուտները։

Ժ. Թեմական պատգամաւորական ժողովը ընտրում է իրրև գործադիր մարմին չորս տարի ժամանակամիջոցով Թեմական խորհուրդ՝ նախագահութեամբ Թեմական Առաջնորդի կամ նորա ներկայացուչչի։

ԺԱ. Թեմական ժողովները հաչուետու և պատասխանատու են Կենդրոնական ժողովի առաջ։

ԺԲ. Կենդրոնական ժողովը կազմուում է իւրաքանչիւր Թեմից և Ս. Էչմիածնի կողմից ընտրուած պատգամաւորներից նախագահութեամբ Վեհափառ կաթուղիկոսի կամ նորա ներկայացուչչի։

ԺԳ. Կենդրոնական ժողովը իրաւունք ունի փոփոխութիւն մտցնել Էչմիածնի նախահաչուի և Թեմական ժողովների կազմած Թեմական նախահաչիւների մէջ։ Այս փոփոխութիւններն անելիս Կենդրոնական ժողովը պէտք է աչքի առաջ ունենայ՝

ա) Հաւասարութեան սկզբունքը, որպէսզի վանքապատկան կայքերը, քանի որ ընդհանուր ազգային եկեղեցական սեփականութիւն են, զանազան թեմերի միջև անհաւասար բաժանուած լինելով, թեմերից մէկն անարդարազէս պակաս, միւսն անհաւասարազէս աւելի օգտուելիս չլինի դրանցից։

բ) Էջմիածնի հաստատութիւնների պէտքերի չափը և Էջմիածնական կայքերի եկամուտներից թեմերից Էջմիածնի գանձարանին հասանելիքի արդար քանակը։

Նախագահ Վարչական—Իրաւական Սեկցիայի՝

Անդամ Սինոդի Բարգէն վարդապետ

Անդամք՝ Սենեքերիմ Արծրունի

Սամսոն Յարութիւնեան

Յովհաննէս Սպենդիարեան

Պօղոս Ղամբարեան

Աւետիք Սահակեան

ԺԳ. յօդ. հետ համաձայն չեմ Սմբատ Խաչատրեան

Յովսէփ Ամիրխանեան

Քարտուղար Սիրական Տիգրանեան.

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԵՊՀԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ

Որպէսզի ընթերցողները Ս. Էջմիածնի կալուածների բարեկարգութեան համար կազմած գրքիս մէջ զետեղուած ծրագիրների հետ միաժամանակ տեղեկութիւններ ունենան այդ կալուածների մասին՝ բերում ենք այստեղ բոլոր կալուածների համառօտ ցուցակը՝ գնելով իւրաքանչիւրի դիմաց նորա տարածութեան և բերած արդիւնքի մօտաւոր չափը՝ քաղելով ներկայ 1908 թ. Սինոդում եղած պայմանագրերից և այլ գործերից։*)

1. Վաղարշապատ գիւղ՝ ունի 7312 դես. 1890 քառ. սաժ. տարեկան արդիւնք տալիս էր նախկին տարիներում 20—16 հազար ռուբ. վերջին տարիներում 10 հազարից մինչև 11 հազար հինգ հարիւր ռուբ. արդիւնք։

---

*) Ս. Էջմիածնի կալուածների մասին ընթերցողը կարող է նաև գտնել տեղեկութիւններ Տ. Մխիթար վարդապետի «Հայերը Ռուսաստանում» գրքի մէջ։ Վաղարշապատ, 1906.

Վաղարշապատում գտնուած վանքի ա) հինգ այգիներից տարեկան զուտ արդիւնք 2000 ռուբլի, բ) սեպհական վաբելահողերից միջին թուով 2500 ռուբ. գ) ներքին զօրուղից 8405 ռ. խոտահարքից 2500, բամբակից 1000 ռ.։

2. Եղուարդ գիւղ՝ 10106 դես. 1200 քառ. սաժ. տարեկան արդիւնք տալիս էր միջին թուով 10 հազար ռուբ. իսկ վերջին երեք տարին տարեկան մօտ 3—4 հազար ռուբ.

3. Օշական գիւղ՝ 4057 դես. 74 քառ. սաժ. միջին թուով տարեկան տուել է 5—6 հազար, վերջին տարին երեք հազար ռուբ։

4. Մաստարա գիւղ՝ 5870 դես. միջին թուով տալիս է տարեկան 4000 ռուբ. իսկ վերջին երկու տարում մօտ 2000 ռուբ. տարեկան։

5. Բջնի գիւղ՝ իւր անտառով և արօտատեղիներով 5344 դես, 74 քառ. սաժ. տարեկան 3 հազար ռուբլի, անտառից ոչինչ։

6. Մուղնի գիւղ՝ 981 դես. 1080 քառ. սաժ. տարեկան 500 ռուբլի։

7. Գեօկ Բիլիսա՝ գիւղի $^1/_{16}$ մասը և մի կտոր հող մօտ 200 դեսեատին՝ տարեկան 240 ռուբլի։

8. Քիւզաչիֆ գիւղ՝ վանքի մասը 195 դես. տարեկան 258 ռուբլի։

9. Երկու այգի Օշականում՝ 25 դես. տարեկան 650 ռուբ.։

10. Երեք այգի Աշտարակում՝ 5 դես. տարեկան 617 ռ.։

11. Մի այգի Փարաքարում՝ 7 դես. 1449 քառ. սաժ. տարեկան 360 ռուբլի։

12. Երկու այգի Երևանում՝ մօտ 5 դես. տարեկան 906 ռ.։

13. Երկու այգի Թիֆլիսում՝ 2 դես. տարեկան 620 ռուբ.։

14. Մի այգի Գանձակում՝ 4 դես. տարեկան 250 ռուբ.։

15. Ամբերդի արտատեղին՝ 440 դես. 810 քառ. սաժ. 157 ռուբլի։

16. Ղբռ արօտատեղի Վաղարշապատում՝ 400 դեսեատ. 266 ռուբլի։

17. Մի կտոր հող Վերին Թալինում՝ 15 դես. 1440 քառ. սաժ. վէճի պատճառով արդիւնք չէ բերում։

18. Երկու պարտէզ Ախալցխայի Ծիրոզ գիւղում՝ 1 դես. արդիւնք 40 ռուբլի։

19. Գետարգելի վարելահողը՝ 540 դեսեատ. տարեկան 1500 ռուբլի։

20. Դայլարի վարելահողը (Ղարսի վիճ.) 615 դես. 800 ռուբ. տարին։

21. Մարցայ անտառները (Թիֆլիսի վիճ.) 7864 դես. 320 քառ. սաժ. 400 ռուբլի արդիւնք։

Այսպիսով Մ. Աթոռի հողերի ընդհանուր տարածութիւնն է 45188 դես., որից ստացւում է տարեկան մօտ 47,469 ռուբ. սրանից հանելով հողային և երկրաչափական հարկերը 2,500 ռուբ. մնում է զուտ արդիւնք մօտ 44,969 ռ. այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով 95½ կոպ.։

Բացի վերոյիշեալ հողերից, անտառներից և այգիներից Մ. Աթոռն ունի նաև հետևեալ անշարժ կալքերը.

1. Վաղարշապատում ա) 3 տուն՝ ստացւում է միայն մի տնից 276 ռուբլի։ բ) Երկու ջրաղաց 1100 ռուբլի. գ) Շուկայից դուրս 11 կրկապ տարեկան 1137 ռուբլի, դ) Շուկայում 186 կրպակ—տարեկան 2000 ռուբլի, խանութներից մեծ մասը դատարկ են. ե) մի քարհանք 300 ռուբ. զ) Անտառ-է զբօսավայր։ Ընդամենայն 4813 ռուբլի։

2. Ախալցխայում մի տուն 208 ռուբլի.

3. Ալէքսանդրապօլում 28 կրպակ և մի չտեմարան՝ արդիւնք տարեկան 2307 ռուբ. վերջին երկու տարին ոչինչ չէ ստացւում—որոշ պայմանով յանձնուած լինելով հոգաբարձութեան տեղւոյն։

4. Ախալքալաքում մի կրպակ 185 ռուբ.

5. Գանձակում կրպակ և քարվանսարա 800 ռուբլի։

6. Թիֆլիսի էջմիածնապատկան տներից և խանութներից մօտ 13,000 ռուբլի։

7. Քիշնեի չինութիւններից տարեկան 24,000 ռուբլի, արդէն լրանում է երկու տարին, որ արդիւնք չենք ստանում վէճի պատճառով։

8. Երևանում 3 ջրաղաց 500 ռուբ.

9. » 5 կրպակ 310 ռուբ.

Ուրեմն վերոյիշեալ անշարժ կալուածքներից Մ. Աթոռը ստանում է տարեկան 43,816, ընդամէնը 88,785 ռուբ։

Պէտք է այստեղ նկատել, որ կալուածքների արդիւնքը զգալի չափով պակասել է նախկին տարիների համեմատու-

թեամբ։ Մէկ կողմից թէ գիւղացիք և թէ կապալառուները իւր ժամանակին չեն վճարում և խոյս են տալիս լրիւ և կանոնաւոր վճարելուց, միւս կողմից էլ կալուածքները չեն շահագործւում կանոնաւոր, այնտեղ՝ որտեղ կարելի է ծախս անել կրկնապատիկը ստանալու համար՝ չէ անւում և ընդհակառակը եղածներն էլ հետզհետէ կորցնում են իրենց արժէքը։

ԹԵՄԵՐԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ.

Առ այժմ հնարաւորութիւն չունենալով այստեղ մանրամասն նշանակել թեմերի բոլոր կալուածքները յականէ անուանէ՝ ընդհանուր գաղափար կազմելու համար բերում ենք թեմերում գտնուած վանքերի կալուածքների ընդհանուր տարածութիւնն և մուտքը։

1. Նոր Նախիջեւանի թեմ։ Այս թեմի երեք վանքերը միասին ունեն մօտ 4418 դես. հող, որ տարեկան բերում է 13,085 ռուբ. արդիւնք, որից հանելով հողային հարկ 60 ռ. մնում է արդիւնք 13,025 ռ. այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով 2 ռ.—95 կոպ.։

2. Աստրախանի թեմ։ Թեմում վանքական հող չկայ, միայն քաղաքում կայ 60 դես. հող, որի տարեկան 150 ռ. արդիւնքը յատկացուած է առաջնորդական տան։

3. Շամախու թեմ։ Այս թեմում գտնուած երկու վանքը միասին ունեն մօտ 79 դես. որից ստանում են տարեկան 1830 ռ. արդիւնք, հանելով հողային հարկը 20 ռուբ. մնում է տարեկան արդիւնք 1810 ռ. դեսեատինից միջին թուով 22 ռ.—91 կոպ.։

4. Ղարաբաղի թեմ։ Սոյն թեմի 14 վանքը միասին ունին մօտ 58,698 դես. հող, որից ստացւում է տարեկան մօտ 6700 ռ. արդիւնք։ Ստացուած գումարից հանելով երկրաչափական և հողային հարկը 3768 ռ. մնում է արդիւնք 2992 ռ. այսինքն իւրաքանչիւր դեսեատինից տարեկան միջին թուով 5 կոպ.։ Այս թեմում են գտնւում Գանձասարի (11,125 դես.), Խոթայ (45,997 դես.), Ճալէթի (407 դես.) նշանաւոր անտառները։

5. Երեւանի թեմ։ Այս թեմի 48 վանքը միասին ունեն

մօտաւորապէս 32,440 դես. հող, որից ստացւում է տարեկան մօտ 17,190 ռուբլի արդիւնք, հանելով 706 ռուբլի հողային և երկրաչափական հարկը մնում է արդիւնք 16,484 ռ. այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով 50 կոպ.։

6. Վրաստանի և Իմերեթի թեմ։ Այս թեմի 17 վանքը միասին ունեն մօտաւորապէս 12,250 դես. հող, որից տարեկան արդիւնք ստացւում է 3500 ռ. հանելով 420 ռուբլի պետական հարկը՝ մնում է 3080 ռուբ. այսինքն իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով արդիւնք 25 կոպէկ։ *)

Մայր աթոռը և Ռուսաստանի Հայոց վեց թեմերի վանքերը միասին ունեն մօտաւորապէս 153,133 դես. հող, որից ստացւում է տարեկան 80,605 ռուբլի արդիւնք, իւրաքանչիւր դեսեատինից միջին թուով $52^1/_2$ կոպ.։

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա., Բ., Գ., Դ., 1906 թ.
(ВѢДОМОСТЬ А. Б. В. Г. 1906 г.)

Որպէսզի ընթերցողները հնարաւորութիւն ունենան իմանալու մեր 6 թեմերում գտնուած եկեղեցիների, քահանաների, ծխականների և եկեղեցիների դրամագլուխների քանակը՝ այստեղ համառօտակի առաջ ենք բերում այդ տեղեկութիւնները մօտաւոր իսկութեամբ՝ հանելով ս. Էջմիածնի Սինոդի 1906 թ. Տեղեկագրից։ Որքան որ այդ տեղեկութիւնները, մանաւանդ ծխականների թիւը, ճիշտ կերպով չհամապատասխանեն իրականութեան՝ այնուամենայնիւ իրենց մէջ պարունակում են մօտաւոր իսկութիւն։

Ա. Երեւանի թեմում կայ 652 եկեղեցի, 18 վանք, 784 քահանայ, 334,157 արական, 297,250 իգական. ընդամենայն 631,407 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է 968 ծխական, մի քահանային 805 ծխական։ 652 եկեղեցին ունին միասին 192,105 ռ.—95 կոպ. դրամագլուխ, 57,077—41 մուաք, 48,461—26 ելք։ 18 վանքը միասին ունին 722 ռուբ. դրամագլուխ. 9528—55 մուաք, 10221—55 ելք։

*) Թէ իւրաքանչիւր թեմում քանի վանքեր և իւրաքանչիւրն քանի՞ դեսեատին կամ որքան արդիւնք է բերում—տեսնել Ե. Մխիթար վարդապետի «Հայերը Ռուսաստանում» գրքում։

Բ. Ղարաբաղի թեմում կայ 217 եկեղեցի, 7 վանք, 220 քահանայ, 98651 արական, 80860 իգական՝ ընդամենայն 179,511 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է 827 ծխական, մի քահանային 816 ծխական, 220 եկեղեցին միասին ունին 35,953 ռ.—93 կ. դրամագլուխ. (մուտքը և ելքը ճիշտ չլինելով՝ չդրինք այստեղ։)

Գ. Վրաստանի և Իմերեթի թեմում կայ 369 եկեղեցի 14 վանք, 366 քահանայ, 174,071 արական 153,703 իգական, ընդամենայն 327,774 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է 887 ծխական, մի քահանային 888 ծխական։ 369 եկեղեցին միասին ունին 228,769 ռ. 53 կ. դրամագլուխ, 72,732 ռ. 53 կ. մուտք, 88,282 ռ. 68 կ. ելք։ 14 վանքն ունին 978 ռ. 86 կ. դրամագլուխ, 6175 ռ. 12 կ. մուտք, 8723 ռ. 71 կ. ելք։

Դ. Աստրախանի թեմը ունի 31 եկեղեցի 1 վանք, 52 քահանայ, 20,397 արական 18,604 իգական ընդամենայն 39,001 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 1258 ծխական, իւրաքանչիւր քահանային 750 ծխական։ 31 եկեղեցին միասին ունին 537,963 ռ. 8 կ. դրամագլուխ։ Մուտք 49,312 ռ. 17 կ. և ելք 100,130 ռ. 50 կոպ.։

Ե. Բեսսարաբիայի թեմում կայ 44 եկեղեցի 3 վանք, 57 քահանայ, 18,996 արական, 18,447 իգական, ընդամենայն 37,443 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 851 ծխական, իւրաքանչիւր քահանային 657 ծխական. 44 եկեղեցին միասին ունին 690,745 ռ. 27 կ. դրամագլուխ, 224,105 ռ. 59 կ. մուտք, և ելք 209,847 ռ. 88 կ.։

Զ. Շամախու թեմում կայ 38 եկեղեցի, մի վանք, 42 քահանայ, արական 24,896, իգական 23,463, ընդամենայն 48,359 ծխական։ Մի եկեղեցուն ընկնում է 1273 ծխական, մի քահանային 1151 ծխական։ 38 եկեղեցին ունի 92,254 ռ. 52 կ. դրամագլուխ, 21,746 ռ. 91 կ. մուտք և 16,325 ռ. 74 կ. ելք։

Այսպիսով Ռուսաստանի 6 Հայ—Լուսաւորչական թեմում կայ 1351 եկեղեցի 44 վանք 1521 քահանայ։ 1,263,495 ծխական։ 1351 եկեղեցին միասին ունին 1,777,792 ռուբլի 28 կոպ. դրամագլուխ։

Իսկ Տ. Մխիթար վարդապետի քաղած տեղեկու-

թեանց*) համաձայն 1907 թուի սկզբին Ռուսաստանի վեց Լուսաւորչական Հայոց թեմերում եղել է ընդամէնը 1,392,129 ծիսական ըստ այսմ.—Երևանի թեմում—668,813, Թիֆլիսի թեմում—372,800, Ղարաբաղի թեմում—175,632, Շամախու թեմում—62,649, Աստրախանի թեմում—60,842 և Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում—51,393։

ՊԱՏԿԵՐ

Մոիչ գումարաց գանձարանի Մ. Աթոռոյ 1898, 1899, 1900 և 1902 տարիների։

1898 թ.

Մնացորդ 1907 թ. 3476|03, կալուածական 69655|66 վիճակային 8394|01,, Հոգեբաժին պսակահարկ 6320|48, Պաղի 1468|91, Ուխտատեղիներից 2960|81, Տպարանից 14041|06, Ագարակի 724|10, Մ. Տաճարի մոմավաճառումից 261, Լուսադին, 1056|71, Պատահական 6346|42, Յօգուտ ճեմարանի 5823 ռ. Գանձանակ Մ. Աթոռի 2952|98։ 0/0|0 արժէթղթոց Մ. Աթոռի 19788|13, Տուգանագրամ 5 ռուբ. ընդամենայն մուտք, 1898 թուում 143,274 ռուբ. 30 կ.

1899 թ.

Մնացորդ 1908 թ. 6265|44. Կալուածական 62968|17, Վիճակային 7001|49, Հոգեբաժին 8351|72, Պաղի 970|22, Ուխտատեղիներից 6234|67, Տպարանի 24714|90, Ագարակի 604|53, Մ. Տաճարի մոմավաճառութիւնից 156|16, Դարբաս 211|50, Պատահական 17,320|51 Յօգուտ ճեմարանի 14,088|65, Գանձանակ Մ. Աթոռի 2339|97, Հին հանդերձների վաճառումից 266|30, 0|0 0|0 արժէթղթոց Մ. Աթոռի 10030|16, Տուգանագրամ 20 ռուբ. ընդամենայն մուտք 1899 թ. ընթացքում 171,285 ռ. 58 կոպ։

---

*) Տես Первая всеобщая перепись населенія россійской имперіи 1897 г., подъ редакціею Н. А. Тройницкаго, С.-Пет. 1905. որից հայերի վերաբերեալ վիճակագր. տեղեկութիւններ քաղել է Տ. Մխիթար վարդապ. իւր «Հայերը Ռուսաստանում» գլխի մէջ։

1900 թ.

1899 թ. մնացորդ 8612 ռ. 45 կ., կալուածական 47850|34, վիճակային 6329|21, հոգեբաժին 8247|74, պտղի 1696|34, ուխտատեղեաց 9092|22, տպարանի 14585|46, ադարակի 1020|55, մայր տաճարի մոմավաճառումից 268|51, լուսագին 1163|80, դարբաս 222|20, պատահական 16453|35, ցօգուտ ճեմարանի 6032|50, գանձանակ մ. աթոռի 2124|46. հին հանդերձների վաճառումից 56 ռ. 0|0 0|0 արժէթղթոց մ. աթոռի 19274|19, տուգանաղրամ 19 ռուբ. ընդամենայն մուտք 1900 թ. ընթացքում 143,048 ռուբ. 35 կոպ։

1902 թ.

1901 թ. մնացորդ 2727|31, կալուածական 80745|54 վիճակային 12178|73, հոգեբաժին և պատահարկ 16827|12, պտղի 2565|43, ուխտատեղեաց 7852|41, տպարանի 11318|79, ադարակի 1974|76, մայր տաճարի մոմավաճառութիւնից 299, լուսագին 1057|27, դարբաս 330|20. պատահական 3520|30, ցօգուտ ճեմարանի 15,707|29, գանձանակ 1420|22, հին հանդերձների վաճառումից 45|70, 0|0 0|0 արժէթղթոց մ. աթոռի 14686|29, պատահական 42|45, ընդամենայն մուտք 1902 թ. ընթացքում 173,298 ռ. 81 կոպ։

Մ. Աթոռի դրամագլուխն ու աւանդադրամները.

մ. աթոռի գանձարանի հաշուեկշռից երևում է՝ որ առ 1-ն հոկտեմբերի 1908 թ. գանձարանում կար ա. մայր աթոռի գումար. ա) պատրաստի դրամով 5684 ռ.—21 կ. բ) 0|0 0|0 թղթով 388,264 ընդամենայն 393,948 ռ.—21 կոպ։

բ. աւանդապահութեան, ա) պատրաստի դրամով 20,483—17 բ) 0|0 0|0 թղթով 50,095 ռ.—42 կոպ. ընդամենայն 70,578 ռ.—59 կոպ։

մ. աթոռի և աւանդապահութեան գումար առ 1-ն հոկտեմբերի 1908 թ. գանձարանում կար ընդամէնը 464,526 ռ. —80 կոպէկ։